

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի նոյեմբերի 30-ի
թիվ 322-Ն որոշմամբ

ՀՀ ֆինանսների նախարարի
2011 թվականի դեկտեմբերի 16-ի
թիվ 1032-Ն հրամանով

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի
----- Արթուր Զավադյան
8 դեկտեմբերի 2011 թ.

ՀՀ ֆինանսների նախարար՝
----- Վաչե Գաբրիելյան
16 դեկտեմբերի 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ,
ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ՖՈՆԴԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՅԻՆ
ՊԼԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Ընդհանուր դրույթներ

Սույն հրահանգում ներկայացված ձևակերպումները չեն ներառում տվյալ հաշվի կամ ենթաբաժնի բոլոր հաշվապահական թղթակցությունները: Կազմակերպությունները կարող են կատարել հրահանգում չներկայացված հաշվապահական ձևակերպումներ, եթե վերջիններս համապատասխանում են սույն հրահանգի տրամաբանությանը և չեն հակասում գործող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերին:

Սույն հրահանգի իմաստով՝ «պետական» տերմինների սահմանումները տրված են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 14.05.2002 թ. թիվ 173 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկում»:

Սույն հրահանգում ներկայացված քաղաքացիական իրավունքի սուբյեկտների սահմանումները տրված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում:

ԿԱՐԳ 1 – 2 ԱԿՏԻՎՆԵՐ

ԲԱԺԻՆ 10 «ԴՐԱՄԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ»

Բաժին 10-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 100 «Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր», 101 «Թղթակցային և այլ հաշիվներ կենտրոնական բանկերում», 102 «Թղթակցային և բանկային հաշիվներ բանկերում», 103 «Թղթակցային և բանկային հաշիվներ կազմակերպության հետ կապված բանկերում», 104 «Ավանդներ»:

Ենթաբաժին 100 «Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր»

Ենթաբաժին 100-ը նախատեսված է կազմակերպության պատկանող կանխիկ դրամական միջոցների և վճարային փաստաթղթերի հաշվառման համար: Սույն ենթաբաժնում չեն ներառվում ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում կազմակերպությանը տրամադրած դրամական միջոցներն ու վճարային փաստաթղթերը, որոնք արտացոլվում են հետհաշվեկշռային հոդվածներում:

Ենթաբաժին 100-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվը՝ 1000 «Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր»:

Հաշիվ 1000 «Կանխիկ դրամական միջոցներ և վճարային փաստաթղթեր»

1-ին կարգի հաշիվ 1000-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպության դրամարկղեր, բանկումատներ և ավտոմատ գանձման սարքեր մուտքագրված, ինչպես նաև ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցները, կազմակերպության կողմից ձեռք բերված չեկերը և այլ վճարային փաստաթղթերը, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը:

10000 «Կանխիկ դրամ դրամարկղում» - հաշիվը նախատեսված է կազմակերպության դրամարկղերում ՀՀ դրամի և արտարժույթի հաշվառման համար:

10001 «Կանխիկ դրամ ճանապարհին» - հաշիվը նախատեսված է ճանապարհին գտնվող կանխիկ դրամի հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է կազմակերպության դրամարկղից կազմակերպության ստորաբաժանումներ, բանկոմատներ և այլ կազմակերպություններ կանխիկ դրամ փոխանցելու դեպքում, մինչև փաստաթղթերի ստացումը՝

Դր - 10001

Կր - 10000

Հաշիվը կրեդիտագրվում է՝

1) կազմակերպության դրամարկղից կազմակերպության ստորաբաժանումներ, բանկոմատներ և այլ կազմակերպություններ փոխանցված կանխիկ դրամը ստորաբաժանումների, այլ կազմակերպությունների դրամարկղեր և բանկոմատներ մուտքագրելու դեպքում՝

Դր - Թղթակցային հաշիվներ, ստացող կազմակերպությունների հաշիվներ, 10002

Կր - 10001

2) կազմակերպության ստորաբաժանումներից և այլ կազմակերպություններից ստացված կանխիկ դրամը բանկի դրամարկղ մուտքագրելու դեպքում՝

Դր - 10000

Կր - 10001:

10002 «Կանխիկ դրամ ինքնասպասարկման սարքերում» - հաշիվը նախատեսված է կազմակերպության բանկոմատներում, ավտոմատ գանձման սարքերում կամ նմանատիպ այլ սարքավորումներում կանխիկ ՀՀ դրամի ու արտարժույթի արտացոլման համար:

Հաշիվը դեբետագրվում է կազմակերպության բանկոմատներ, ավտոմատ գանձման սարքեր կամ նմանատիպ այլ սարքավորումներ կանխիկ դրամ մուտքագրելու դեպքում՝

Դր - 10002

Կր - 10001

Հաշիվը կրեդիտագրվում է՝

1) կազմակերպության բանկոմատներից, ավտոմատ գանձման սարքերից կամ նմանատիպ այլ սարքավորումներից կանխիկ դրամը կազմակերպության դրամարկղ փոխանցելու դեպքում՝

Դր - 10001

Կր - 10002

2) քարտերի հիման վրա հաճախորդներին վճարված կանխիկ դրամի դիմաց հաճախորդների հաշիվներից միջոցների գանձման դեպքում՝

Դր - Հաճախորդների պլաստիկ քարտերի (դեբետային և վարկային) հաշիվներ, ստացվելիք այլ գումարներ

Կր - 10002:

10003 «Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր» - հաշիվը նախատեսված է ճանապարհային և հաշվարկային չեկերի և այլ վճարային փաստաթղթերի հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է հաճախորդների ներկայացրած չեկերը և այլ վճարային փաստաթղթերը ընդունելիս՝ այն դեպքում, երբ կազմակերպության վճարում է հաճախորդին դրանց դիմաց՝

Դր - 10003

Կր - 10000, թղթակցային հաշիվ:

Հաշիվը կրեդիտագրվում է չեկերի և այլ վճարային փաստաթղթերի դիմաց փոխհատուցում ստանալիս՝

Դր - 10000, թղթակցային հաշիվ

Կր - 10003:

10004 «Կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր ճանապարհին» - հաշիվը նախատեսված է ճանապարհին գտնվող ճանապարհային և հաշվարկային չեկերի և այլ վճարային փաստաթղթերի հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է կազմակերպության ստորաբաժանումներ և այլ կազմակերպություններ վճարային փաստաթղթերի փոխանցելու դեպքում՝

Դր - 10004

Կր - 10003:

Հաշիվը կրեդիտագրվում է կազմակերպության ստորաբաժանումներից և այլ կազմակերպություններից ստացված վճարային փաստաթղթեր ստանալիս՝

ԴԿ - 10003

ԿԿ - 10004:

Ենթաբաժին 101 «Թղթակցային և այլ հաշիվներ կենտրոնական բանկերում»

Ենթաբաժին 101-ը նախատեսված է ՀՀ և այլ երկրների կենտրոնական բանկերում ՀՀ դրամով և արտարժույթով թղթակցային հաշիվների, կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվների և ցպահանջ ու ժամկետային ավանդների հաշիվների միջոցների հաշվառման համար:

Ենթաբաժին 101-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվը՝ 1010 «Թղթակցային և այլ հաշիվներ կենտրոնական բանկերում»:

Հաշիվ 1010 «Թղթակցային և այլ հաշիվներ կենտրոնական բանկերում»

1-ին կարգի հաշիվ 1010-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են ՀՀ կենտրոնական բանկում կազմակերպության հաշիվներին մուտք եղած, իսկ կրեդիտում՝ ելք եղած դրամական միջոցները:

10100 «Թղթակցային հաշիվ կենտրոնական բանկերում» - հաշիվը նախատեսված է ՀՀ և այլ երկրների կենտրոնական բանկերում կազմակերպության թղթակցային հաշիվներում առկա դրամական միջոցների հաշվառման համար:

10101 «Կենտրոնական բանկերում թղթակցային հաշիվների միջոցների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերում կազմակերպության թղթակցային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների (առկայության դեպքում) հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է կենտրոնական բանկերում կազմակերպության թղթակցային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

ԴԿ - 10101

ԿԿ - 60000

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 10101

ԿԿ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է կենտրոնական բանկերում կազմակերպության թղթակցային հաշիվների միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 10101:

10102 «Կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվ կենտրոնական բանկերում» - հաշիվը նախատեսված է նոր ստեղծվող կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի ձևավորման և գործող կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի համալրման համար՝ մինչև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կանոնադրական հիմնադրամի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են կազմակերպության հայեցողությամբ: Սույն հաշիվն օգտագործվում է նաև համախմբման ժամանակ՝ այլ երկրների կենտրոնական բանկերում օտարերկրյա դուստր ֆինանսական կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամների համալրման կուտակման հաշիվի արտացոլման համար:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական հիմնադրամի ձևավորման և համալրման դեպքում՝

ԴԿ - 10102

ԿԿ - 39230

Կանոնադրական հիմնադրամի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

10103 «Կենտրոնական բանկերում կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվի միջոցների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կանոնադրական հիմնադրամի ձևավորման և համալրման նպատակով բացված հաշիվի մնացորդների դիմաց տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների (առկայության դեպքում) հաշվեգրման համար:

Հաշիվը դեբետագրվում է կենտրոնական բանկում կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվի միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

ԴԿ - 10103

ԿԿ - 60004

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 10103

ԿԿ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է կենտրոնական բանկում կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշվի միջոցների դիմաց տոկոսների ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 10103:

Ենթաբաժին 102 «Թղթակցային և բանկային հաշիվներ բանկերում»

Ենթաբաժին 102-ը նախատեսված է բանկերում ՀՀ դրամով և արտարժույթով, ինչպես նաև թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով թղթակցային հաշիվների և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Ենթաբաժին 102-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1020 «Թղթակցային հաշիվներ բանկերում», 1021 «Բանկային հաշիվներ բանկերում»:

Հաշիվ 1020 «Թղթակցային հաշիվներ բանկերում»

1-ին կարգի հաշիվ 1020-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են բանկերում առևտրային բանկի դրամական և թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով թղթակցային հաշիվներում միջոցների առկայությունն ու շարժը:

10200 «Թղթակցային հաշիվներ բանկերում» - հաշիվը նախատեսված է այլ բանկերում առևտրային բանկի թղթակցային հաշիվներում դրամական միջոցների հաշվառման համար:

10201 «Բանկերում թղթակցային հաշիվների միջոցների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է բանկերում բանկերի թղթակցային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է այլ բանկերում բանկի թղթակցային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

ԴԿ - 10201

ԿԿ - 60010

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 10201

ԿԿ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է այլ բանկերում բանկի թղթակցային հաշիվների միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 10201:

10202 «Թանկարժեք մետաղներով թղթակցային հաշիվներ բանկերում» - հաշիվը նախատեսված է բանկերում առևտրային բանկի թանկարժեք մետաղներով թղթակցային հաշիվներում միջոցների հաշվառման համար:

10203 «Բանկերում թանկարժեք մետաղներով թղթակցային հաշիվների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է բանկերում բանկերի թղթակցային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է այլ բանկերում բանկի թղթակցային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

ԴԿ - 10203

ԿԿ - 60017

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 10203

ԿԿ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է այլ բանկերում բանկի թղթակցային հաշիվների միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 10203:

2-րդ կարգի հաշիվներ 10202-ի և 10203-ի հաշվառումը իրականացվում է թանկարժեք մետաղներով հաշիվները կարգավորող նորմատիվ-իրավական ակտերով:

Հաշիվ 1021 «Բանկային հաշիվներ բանկերում»

1-ին կարգի հաշիվ 1021-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են բանկերում կազմակերպության դրամական և թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով բանկային հաշիվներում միջոցների առկայությունն ու շարժը:

10210 «Բանկային հաշիվներ բանկերում» - հաշիվը նախատեսված է այլ բանկերում կազմակերպության բանկային հաշիվներում դրամական միջոցների հաշվառման համար:

10211 «Բանկերում բանկային հաշիվների միջոցների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է բանկերում կազմակերպության բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է բանկերում կազմակերպության բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

ԴԿ - 10211

ԿԿ - 60011

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 10211

ԿԿ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է բանկերում բանկի թղթակցային հաշիվների միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 10211:

10212 «Թանկարժեք մետաղներով բանկային հաշիվներ բանկերում» - հաշիվը նախատեսված է բանկերում կազմակերպության թանկարժեք մետաղներով բանկային հաշիվներում միջոցների հաշվառման համար:

10213 «Բանկերում թանկարժեք մետաղներով բանկային հաշիվների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է բանկերում կազմակերպության թանկարժեք մետաղներով բանկային հաշիվների միջոցներից ստացվելիք տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է բանկերում կազմակերպության թանկարժեք մետաղներով բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

ԴԿ - 10213

ԿԿ - 60017

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 10213

ԿԿ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է բանկերում կազմակերպության թանկարժեք մետաղներով բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսներ ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 10213:

10214 «Կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվ բանկերում» - հաշիվը նախատեսված է նոր ստեղծվող կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի ձևավորման և գործող կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի համալրման համար՝ մինչև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով կանոնադրական հիմնադրամի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են կազմակերպության հայեցողությամբ: Սույն հաշիվն օգտագործվում է նաև համախմբման ժամանակ՝ այլ բանկերում օտարերկրյա դուստր ֆինանսական կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամների համալրման կուտակման հաշիվի արտացոլման համար:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական հիմնադրամի ձևավորման և համալրման դեպքում՝

ԴԿ - 10214

ԿԿ - 39230

Կանոնադրական հիմնադրամի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

10215 «Բանկերում կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվի միջոցների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կանոնադրական հիմնադրամի

ձևավորման և համալրման նպատակով բացված հաշվի մնացորդների դիմաց տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվեգրման համար:

Հաշիվը դեբետագրվում է կենտրոնական բանկում կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշվի միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

Դպ - 10215

Կպ - 60018

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

Դպ - 10215

Կպ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է կենտրոնական բանկում կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշվի միջոցների դիմաց տոկոսների ստանալիս՝

Դպ - Դրամական միջոցներ

Կպ - 10215:

Ենթաբաժին 103 «Թղթակցային և բանկային հաշիվներ կազմակերպության հետ կապված բանկերում»

Ենթաբաժին 103-ը նախատեսված է կազմակերպության հետ կապված բանկերում ՀՀ դրամով և արտարժույթով, ինչպես նաև թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով թղթակցային հաշիվների և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Ենթաբաժին 103-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1030 «Թղթակցային հաշիվներ կազմակերպության հետ կապված բանկերում», 1031 «Բանկային հաշիվներ կազմակերպության հետ կապված բանկերում»:

Ենթաբաժին 103-ի հաշիվներն ակտիվային են, իսկ դրանց հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ Ենթաբաժին 102-ի համապատասխան 1-ին և 2-րդ կարգի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 104 «Ավանդներ»

Ենթաբաժին 104-ը նախատեսված է կենտրոնական բանկերում և ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդների հաշվառման համար:

Ենթաբաժին 104-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1040 «Կենտրոնական բանկերում ներդրված ավանդներ», 1041 «Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ցպահանջ ավանդներ», 1042 «Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ժամկետային ավանդներ», 1043 «Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններում ներդրված ցպահանջ ավանդներ», 1044 «Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններում ներդրված ժամկետային ավանդներ», 1045 «Ֆինանսական կազմակերպություններում ներդրված թանկարժեք մետաղներով ավանդներ», 1046 «Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններում ներդրված թանկարժեք մետաղներով ավանդներ»:

Հաշիվ 1040 «Կենտրոնական բանկերում ներդրված ավանդներ»

1-ին կարգի հաշիվ 1040-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կենտրոնական բանկերում ներդրված ավանդները, ինչպես նաև դրանց գծով հաշվեգրված տոկոսների գծով ստացվելիք գումարները, իսկ կրեդիտում՝ դրանց մարումը:

10400 «Կենտրոնական բանկերում ներդրված ցպահանջ ավանդներ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերում ներդրված ցպահանջ ավանդների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է

ա) ներդրված ավանդի գումարի չափով՝

Դպ - 10400

Կպ - Դրամական միջոցներ

Հաշիվը կրեդիտագրվում է

ա) համաձայն պայմանագրի, ավանդի մարման ժամանակ ստացման ենթակա գումարի չափով՝

Դպ - Դրամական միջոցներ

Կպ - 10400:

Այն դեպքերում, երբ կազմակերպությունը կարող է կանխորոշել ապագա դրամական հոսքերի ժամանակացույց, հաշվառումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվ 10402-ի դեպքում:

10401 «Կենտրոնական բանկերում ներդրված ցպահանջ ավանդների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերում ներդրված ցպահանջ ավանդների գծով հաշվեգրված տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների (առկայության դեպքում) հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ներդրված ավանդի գծով տոկոսը հաշվեգրելիս՝

Դպ - 10401

Կպ - 60001

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

Դպ - 10401

Կպ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է տոկոսը ստանալիս՝

Դպ - Դրամական միջոցներ

Կպ - 10401:

Այն դեպքերում, երբ կազմակերպությունը կարող է կանխորոշել ապագա դրամական հոսքերի ժամանակացույց, հաշվառումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվ 10403-ի դեպքում:

10402 «Կենտրոնական բանկերում ներդրված ժամկետային ավանդներ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերում ներդրված ժամկետային ավանդների հաշվառման համար

ա) ներդրված ավանդի գումարի չափով՝

Դպ - 10402

Կպ - Դրամական միջոցներ

բ) մինչև ավանդի մարման ժամկետը արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված եկամտի չափով՝ օրական այն թղթակցելով եկամուտների հաշվին՝

Դպ - 10402

Կպ - 60002

Հաշիվը կրեդիտագրվում է

ա) համաձայն պայմանագրի ավանդի անվանական տոկոսադրույքով հաշվարկված ստացման ենթակա գումարի չափով՝

Դպ - 10403

Կպ - 10402:

10403 «Կենտրոնական բանկերում ներդրված ժամկետային ավանդների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերում ներդրված ժամկետային ավանդների գծով հաշվեգրված տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ներդրված ավանդի գծով ստացման ենթակա տոկոսը հաշվառելիս՝

Դպ - 10403

Կպ - 10402

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

Դպ - 10403

Կպ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է տոկոսը ստանալիս՝

Դպ - Դրամական միջոցներ

Կպ - 10403:

Ենթաբաժին 104-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվներ 10400, 10401, 10402 և 10403:

ԲԱԺԻՆ 11 «ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐ»

Բաժին 11-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 110 «Թանկարժեք մետաղների ձուլակտորներ»:

Այս բաժնի հաշիվներում հաշվառումը վարվում է ձեռքբերման արժեքով, այնուհետև կատարվում է վերագնահատում իրական արժեքի հիման վրա՝ վերջինիս փոփոխության դեպքում:

Ենթաբաժին 110 «Թանկարժեք մետաղների ձուլակտորներ»

Ենթաբաժին 110-ը նախատեսված է կազմակերպությունում պահվող և ճանապարհին գտնվող թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորների հաշվառման համար:

Ենթաբաժին 110-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1100 «Բանկային ոսկի», 1101 «Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ»:

Հաշիվ 1100 «Բանկային ոսկի»

1-ին կարգի հաշիվ 1100-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպության կողմից ձեռք բերված կամ իր մոտ պահվող, ինչպես նաև ճանապարհին գտնվող բանկային ոսկին, իսկ կրեդիտում՝ դրա ելքագրումը:

11000 «Բանկային ոսկի» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից ձեռք բերված կամ իր մոտ պահվող բանկային ոսկու հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով:

Հաշիվը դեբետագրվում է

1) տվյալ ակտիվի ձեռք բերման ժամանակ՝

Դպ - 11000

Կտ - Դրամական միջոցներ

2) ակտիվի իրական արժեքը հաշվեկշռայինի նկատմամբ բարձրանալու դեպքում, տարբերության գումարի չափով՝

Դպ - 11000

Կտ - 66111

Հաշիվը կրեդիտագրվում է

1) տվյալ ակտիվի օտարման ժամանակ՝

Դպ - Դրամական միջոցներ

Կտ - 11000

2) ակտիվի իրական արժեքը հաշվեկշռայինի նկատմամբ նվազելու դեպքում, տարբերության գումարի չափով՝

Դպ - 72111, 72231

Կտ - 11000:

11001 «Բանկային ոսկի ճանապարհին» - հաշիվը նախատեսված է ճանապարհին գտնվող բանկային ոսկու հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է՝

1) բանկային ոսկին կազմակերպության մեկ ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում կամ այլ կազմակերպություններ փոխանցելիս՝

Դպ - 11001

Կտ - 11000

2) բանկային ոսկով հաշիվներից բանկային ոսկին այլ կազմակերպություններ կամ հաշվետու կազմակերպություն փոխանցելիս՝

Դպ - 11001

Կտ - բանկային ոսկով թղթակցային կամ բանկային հաշիվներ:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

1) բանկային ոսկին կազմակերպության ստորաբաժանումում մուտքագրելիս՝

Դպ - 11000

Կտ - 11001

2) բանկային ոսկին այլ կազմակերպություններում մուտքագրելիս՝

Դպ - համապատասխան հաշիվ

Կտ - 11001

Հաշիվ 1101 «Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ»

1-ին կարգի հաշիվ 1101-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպության կողմից ձեռք բերված կամ իր մոտ պահվող, ինչպես նաև ճանապարհին գտնվող թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորները, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը:

1-ին կարգի հաշիվ 1101 ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվ 1100-ի դեպքում:

ԲԱԺԻՆ 12 «ՇԱՀՈՒՅԹՈՎ ԿԱՄ ՎՆԱՍՈՎ ՎԵՐԱՀԱՓՎՈՂ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՐՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ»

Բաժին 12-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

120 «Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր»,

121 «Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»,

122 «Ածանցյալ գործիքներ»,

123 «Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»,

124 «Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր»,

125 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր»,

126 «Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր»,

127 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր»,

128 «Սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ»:

Սույն բաժնում հաշվառվում են այն ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների սահմանմանը համաձայն ՀՀՄՍ 39-ի: Ներդրումները սկզբնական ճանաչվում և հետագայում չափվում են իրական արժեքով: Արտարժույթով արտահայտված ակտիվները վերագնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 21-ի:

Ենթաբաժին 120 «Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր»

Ենթաբաժին 120-ը նախատեսված է կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար:

Ենթաբաժին 120-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1200 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր», 1201 «Պետական արժեթղթեր», 1202 «Ոչ պետական արժեթղթեր», 1203 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր»:

Հաշիվ 1200 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 1200-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպությանը պատկանող ՀՀ և այլ երկրների կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթերը, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը:

12000 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է կազմակերպությանը պատկանող կենտրոնական բանկերի կողմից թողարկված զեղչատոկոսային (դիսկոնտային) արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով:

Հաշիվը դեբետագրվում է՝

1) արժեթղթի ձեռք բերման ժամանակ,

ա) եթե ձեռք բերումը իրականացվել է իրական արժեքով՝

Դ-դր - 12000

Կ-դր - Դրամական միջոցներ,

բ) եթե ձեռք բերումը իրականացվել է իրական արժեքը գերազանցող գումարով՝

Դ-դր - 12000

Դ-դր - 72020

Կ-դր - Դրամական միջոցներ

գ) եթե ձեռք բերումը իրականացվել է իրական արժեքից ցածր գումարով՝

Դ-դր - 12000

Կտ - Դրամական միջոցներ

Կտ - 66020

2) Ձեռքբերման պահին կատարվում է արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկ, որով հետագայում հաշվեգրվում են ստացվելիք եկամուտները: Յուրաքանչյուր հաշվետու պահի դրությամբ արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսները հաշվեգրվում են

Դտ - 12000

Կտ - 60500

որից հետո հաշվեկշռային արժեքը վերագնահատվում է ակտիվի իրական արժեքով:

3) Իրական արժեքը բարձրանալու դեպքում, տարբերության գումարի չափով՝

Դտ - 12000

Կտ - 66100

Հաշիվը կրեդիտագրվում է

1) տվյալ ակտիվի օտարման ժամանակ՝

ա) եթե վաճառքի գինը և հաշվեկշռային արժեքը հավասար են՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 12000

բ) եթե վաճառքի գինը գերազանցում է հաշվեկշռային արժեքը՝

Դտ - Դրամական միջոցներ

Կտ - 12000

Կտ - 66020

գ) եթե վաճառքի գինը ցածր է հաշվեկշռային արժեքից՝

Դտ - Դրամական միջոցներ

Դտ - 72020

Կտ - 12000

2) ակտիվի իրական արժեքը նվազելու դեպքում, տարբերության գումարի չափով՝

Դտ - 72100

Կտ - 12000:

12001 «ՀՀ ԿԲ կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է կազմակերպությանը պատկանող կենտրոնական բանկերի կողմից թողարկված տոկոսային (կուպոնային) արժեթղթերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 12000-ի դեպքում:

Հաշիվ 1201 «Պետական արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 1201-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպությանը պատկանող ՀՀ և այլ երկրների պետական արժեթղթերը, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը:

1-ին կարգի հաշիվ 1201-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվ 1200-ի դեպքում:

Հաշիվ 1202 «Ոչ պետական արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 1202-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպությանը պատկանող ՀՀ և այլ երկրների ոչ պետական արժեթղթերը, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը:

1-ին կարգի հաշիվ 1202-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվ 1200-ի դեպքում:

Հաշիվ 1203 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 1203-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպությանը պատկանող միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթերը, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը:

1-ին կարգի հաշիվ 1203-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվ 1200-ի դեպքում:

Ենթաբաժին 121 «Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»

Ենթաբաժին 121-ը նախատեսված է ֆակտորինգային այնպիսի գործարքների հաշվառման համար, որոնց գծով պահանջները կազմակերպությունը մտադիր չէ պահել մինչև վճարում ստանալը, այլ վաճառելու է մինչև մարման (վճարման) ժամկետը:

Ենթաբաժին 121-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1210 «Ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ», 1211 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց հետ ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»:

Ենթաբաժին 121-ի հաշիվներն ակտիվային են, իսկ դրանց հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ ենթաբաժին 120-ի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 122 «Ածանցյալ գործիքներ»

Ենթաբաժին 122-ը նախատեսված է առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքների հաշվառման նպատակով:

Ենթաբաժին 122-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1220 «Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքներ», 1221 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքներ», 1222 «Հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքներ», 1223 «Անհատ ձեռնարկատերերի, ֆիզիկական և այլ անձանց հետ կնքված ածանցյալ գործիքներ»:

Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 32-ի, ՀՀՄՍ 39-ի համաձայն:

Հաշիվ 1220 «Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ածանցյալ գործիքներ»

1-ին կարգի հաշիվ 1220-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպության կողմից կնքված ածանցյալ գործիքների իրական արժեքի ավելացումը, իսկ կրեդիտում՝ նվազումը:

12200 «Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ֆյուչերս» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կնքված ածանցյալ գործիքների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով: Պայմանագրի ժամանակ գրանցումներ չեն իրականացվում:

Հաշիվը դեբետագրվում է՝

1) իրական արժեքը բարձրանալու դեպքում, տարբերության գումարի չափով՝

Դր - 12200

Կր - 66102:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

2) իրական արժեքը նվազման դեպքում, տարբերության գումարի չափով, բայց ոչ ավել, քան հաշվի վրա դրական մնացորդն էր՝

Դր - 72102

Կր - 12200,

եթե իրական արժեքի նվազման դեպքում, գումարը գերազանցում է հաշվի վրա դրական մնացորդ, ապա կորստի հաշվեգրումը շարունակվում է պասիվային 37200 հաշվի վրա՝

Դր - 72122

Կր - 37200

Ենթաբաժնի մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն եղանակով, բացառությամբ օպցիոնների հաշվառման, որտեղ գործիքի ձեռքբերման պահին կատարվում է

Դր - 12202

Կր - Դրամական միջոցներ այնուհետք հաշիվը ենթարկվում է վերազնահալման:

2-րդ կարգի հաշիվ 12201-ում հաշվի հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2-րդ կարգի հաշիվ 12200-ի դեպքում:

12203 «Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված արժույթային սվոպ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կնքված արժույթային սվոպի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով: Պայմանագրի կնքման ժամանակ գրանցումներ սույն հաշվում չեն իրականացվում, արտացոլելով այն հետհաշվեկշռային հաշիվներում: Ապագայում ձեռքբերման ենթակա գումարները արտացոլելով 80203, իսկ վաճառքի ենթակա գումարները՝ 80207 հաշիվներում:

Հաշիվը դեբետագրվում է՝

1) կազմակերպության համար փոխարժեքի բարենպաստ փոփոխության դեպքում, ինչպես նաև տրամադրված արժույթի դիմաց տոկոսների հաշվեգրման գումարի չափով^ա

ԴԿ - 12203

ԿԿ - 66102, 60800:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

2) կազմակերպության համար փոխարժեքի անբարենպաստ փոփոխության դեպքում, բայց ոչ ավել, քան հաշվի վրա դրական մնացորդն էր, ինչպես նաև ստացված արժույթի դիմաց տոկոսների հաշվեգրման գումարի չափով՝

ԴԿ - 72102, 70800

ԿԿ - 12203,

եթե իրական արժեքի նվազման դեպքում, գումարը գերազանցում է հաշվի վրա դրական մնացորդ, ապա կորստի հաշվեգրումը շարունակվում է պասիվային 37203 հաշվի վրա՝

ԴԿ - 72102

ԿԿ - 37203

12204 «Ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված տոկոսադրույքային սվոպ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կնքված տոկոսադրույքային սվոպի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է իրական արժեքով: Պայմանագրի կնքման ժամանակ գրանցումներ սույն հաշվում չեն իրականացվում, արտացոլելով այն հետհաշվեկշռային 80208 հաշվում՝ գործարքի հիմքում ընկած գումարի չափով:

Հաշիվը դեբետագրվում է հաշվեգրվող ստացվելիք տոկոսների չափով՝

ԴԿ - 12204

ԿԿ - 60800:

Հաշիվը կրեդիտագրվում է հաշվեգրվող ստացվելիք տոկոսների չափով՝

ԴԿ - 70800

ԿԿ - 12204,

Ենթաբաժնի մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն եղանակով, ինչ որ 12203 հաշվի դեպքում, բացառությամբ օպցիոնների հաշվառման, որտեղ գործիքի ձեռգրքման պահին կատարվում է

ԴԿ - 12202

ԿԿ - Դրամական միջոցներ այնուհետք հաշիվը ենթարկվում է վերագնահատման:

Ենթաբաժին 123 «Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»

Այս ենթաբաժնի հաշիվներում հաշվառվում են միայն այն շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող այն ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստի համար, որոնք համապատասխանում են «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ»-ում նշված դեպքերին:

Ենթաբաժին 124 «Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր»

Ենթաբաժին 124-ը նախատեսված է ռեպո համաձայնագրերի շրջանակներում վաճառված այն արժեթղթերի համար, որոնք մինչև վաճառքը դասակարգված են եղել որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող: Արժեթղթերի հետագա չափումը տարվում է նույն եղանակով, ինչ վոր մինչև ռեպո համաձայնագրերի շրջանակներում վաճառելը:

Հաշիվ 1240 «ՀՀ կենտրոնական բանկին ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 1240-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված ռեպո համաձայնագրերի շրջանակներում վաճառված արժեթղթերը, իսկ կրեդիտում դրանց վերադարձը:

12400 «ՀՀ կենտրոնական բանկին ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի վերադասակարգման արդյունքում՝ արժեթղթի հաշվեկշռային արժեքի չափով՝

ԴԿ - 12400

ԿԿ - Համապատասխան արժեթղթի հաշիվ

Միաժամանակ կատարվում է պայմանագիրը արտացոլող գրանցումը՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 34000

Հաշիվը կրեդիտագրվում է ռեպո համաձայնագրի ավարտին՝

ԴԿ - Համապատասխան արժեթղթի հաշիվ

ԿԿ - 12400

Միաժամանակ կատարվում է գումարի վերադարձը արտացոլող գրանցում՝

ԴԿ - 34000

ԿԿ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժիններ 124-ում, 125-ում, 126-ում և 127-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2-ին կարգի հաշիվ 12400-ի դեպքում:

Ենթաբաժին 128 «Սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ»

Ենթաբաժին 128-ը նախատեսված է այն բաժնային գործիքների մեջ ներդրումների հաշվառման համար, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև ածանցյալ գործիքներ, որոնք կապված են դրանց հետ և պետք է մարվեն այդպիսի չգնանշվող բաժնային գործիքների մատակարարման միջոցով, որոնք պետք է չափվեն սկզբնական արժեքով:

Ենթաբաժին 128-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1280 «Սկզբնական արժեքով չափվող բաժնային արժեթղթեր և փայամասնակցություններ», 1281 «Սկզբնական արժեքով չափվող ածանցյալ գործիքներ»:

Հաշիվ 1280 «Սկզբնական արժեքով չափվող բաժնային արժեթղթեր և փայամասնակցություններ»

1-ին կարգի հաշիվ 1280-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպությանը պատկանող այն բաժնային արժեթղթերը և դրանվ հետ կապված ածանցյալ գործիքները, որոնց գծով իրական արժեքի չափումը անհնարին է, ինչի պատճառով կազմակերպությունը հարկադրված է հաշվառել դրանք իրական արժեքով, իսկ կրեդիտում՝ դրանց դուրս գրումը:

12800 «Սկզբնական արժեքով չափվող սովորական բաժնետոմսեր» - հաշիվը նախատեսված է կազմակերպությանը պատկանող այն սովորական բաժնետոմսերի և դրանվ հետ կապված ածանցյալ գործիքները, որոնց գծով իրական արժեքի չափումը անհնարին է: Հաշվառումը տարվում է սկզբնական արժեքով:

Հաշիվը դեբետագրվում է ձեռքբերման ժամանակ՝

ԴԿ - 12400 (ձեռքբերման արժեքի չափով)

ԿԿ - Դրամական միջոցներ:

Հաշիվը կրեդիտագրվում է օտարման ժամանակ՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 12400:

ԲԱԺԻՆ 13 «ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՄԱՏՉԵԼԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ»

Բաժին 13-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

130 «Արժեթղթեր»,

131 «Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»,

132 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»,

133 «Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր»,

134 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված վաճառքի համար մատչելի արժեթղթեր»,

135 «Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր»,

136 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր»,

137 «Սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ»:

Սույն բաժնում հաշվառվում են այն ֆինանսական ակտիվները, որոնք համապատասխանում են վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների սահմանմանը համաձայն ՀՀՄՍ 39-ի: Հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 12 «Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ» բաժնի հաշիվների դեպքում, բացառությամբ մեկ տարբերության. իրական արժեքով վերագնահատման ժամանակ վերագնահատման արդյունքը արտացոլվում է համապարփակ եկամուտներում (ծախսերում)՝ թղթակցելով 67020 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից համապարփակ եկամուտներ» և 77020 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից համապարփակ կորուստներ» հաշիվների հետ: Արտարժույթով արտահայտված ակտիվները վերագնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 21-ի:

Բաժնում ընդգրկված հաշիվներն (բացառությամբ՝ 132 «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստ» ենթաբաժնի հաշիվներից) ակտիվային են՝ դեբետում ցույց են տրվում ակտիվների ձեռքբերումը և դրանց շուկայական արժեքի ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց օտարումը և շուկայական արժեքի նվազումը:

ԲԱԺԻՆ 14 «ՄԻՆԶԵՎ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՊԱՀՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ»

Բաժին 14-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

140 «Արժեթղթեր»,

141 «Ֆակտորինգ»,

142 «Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»,

143 «Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր»,

144 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր»,

145 «Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին փոխառությամբ տրամադրված արժեթղթեր»,

146 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց փոխառությամբ տրամադրված արժեթղթեր»,

147 «Սկզբնական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ»:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների սկզբնական գրանցումը կատարվում է իրական արժեքի և գործարքի իրականացմանը ուղղակիորեն առնչվող գործառնական ծախսերի հանրագումարի չափով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ: Երկրորդային շուկայում ձեռք բերված արժեթղթերի գնի մեջ հաշվեգրված, բայց դեռևս չստացված տոկոսներ ներառված լինելու դեպքում, այդ տոկոսները ուղղակիորեն հաշվառման են անցնում տվյալ արժեթղթի գծով ստացվելիք տոկոսների համապատասխան հաշիվներում:

Արտարժույթով արտահայտված ակտիվները վերագնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 21-ի:

Ենթաբաժին 140 «Արժեթղթեր»

Ենթաբաժին 140-ը նախատեսված է մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի հաշվառման համար:

Ենթաբաժին 140-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1400 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր», 1401 «Պետական արժեթղթեր», 1402 «Ոչ պետական արժեթղթեր», 1403 «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների արժեթղթեր»:

Հաշիվ 1400 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 1400-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպությանը պատկանող մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերը և դրանց գծով հաշվեգրված տոկոսները, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը:

14000 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերի կողմից թողարկված զեղչատոկոսային (դիսկոնտային) և անտոկոս արժեթղթերի հաշվառման համար: Զեղչատոկոսային արժեթղթերից եկամուտը ստացվում է անվանական արժեքի ու ձեռքբերման գնի տարբերություն հանդիսացող զեղչի (դիսկոնտի) ամորտիզացիայի միջոցով:

Հաշիվը դեբետագրվում է

ա) արժեթուղթը ձեռք բերելիս՝

Դպ - 14000 (ձեռքբերման արժեք՝ իրական արժեք գումարած գործարքի իրականացմանը ուղղակիորեն առնչվող գործառնական ծախսեր)

Կտ - Դրամական միջոցներ (ձեռքբերման արժեքով)

բ) մինչև արժեթղթի մարման ժամկետը արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով կատարված զեղչատոկոսի ամորտիզացիայի չափով՝ այն դուրս գրելով եկամուտների հաշվին՝

Դպ - 14000

Կտ - 60700

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի մարման դեպքում՝

Կտ - 14000

Դպ - Դրամական միջոցներ

14001 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է տոկոսային եկամուտ բերող կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար: Այս արժեթղթերը ձեռք բերվելիս գրանցվում են ձեռքբերման արժեքով (ձեռքբերման գին գումարած գործարքի հետ կապված ծախսումներ):

Հաշիվը դեբետագրվում է

ա) կենտրոնական բանկերի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր ձեռք բերելիս՝

Դպ - 14001 (ձեռքբերման արժեք)

Կտ - Դրամական միջոցներ (ձեռքբերման արժեք):

բ) արժեթղթի ամորտիզացված արժեքով հաշվառման ժամանակ՝ արդյունավետ տոկոսադրույքի չափով՝

Դպ - 14001

Կտ - 60701:

Հաշիվը կրեդիտագրվում է

ա) արժեթղթի անվանական տոկոսադրույքին համապատասխան ստացման ենթակա գումարի չափով՝

Դպ - 14002

Կտ - 14001:

14002 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների (առկայության դեպքում) հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է կենտրոնական բանկերի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի գծով կուտակված, բայց դեռևս չվճարված տոկոսների չափով՝

Դպ - 14002

Կտ - 14001

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

Դպ - 14002

Կտ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է կենտրոնական բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթերի տոկոսները ստանալիս՝

Դպ - Դրամական միջոցներ

Կտ - 14002:

Ենթաբաժին 140-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվ 1400-ի դեպքում:

Ենթաբաժին 141 «Ֆակտորինգ»

Ենթաբաժին 141-ը նախատեսված է ֆակտորինգային գործառնություններից ստացվելիք գումարների հաշվառման համար:

Ենթաբաժին 141-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1410 «Ֆինանսական կազմակերպությունների հետ ֆակտորինգ», 1411 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների հետ

Ֆակտորինգ», 1412 «Հիմնակրների և ոչ առևտրային կազմակերպությունների հետ ֆակտորինգ», 1413 «Այլ անձանց հետ ֆակտորինգ»:

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ ենթաբաժին 140-ում ընդգրկված հաշիվներին:

Ենթաբաժին 142 «Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»

Ենթաբաժին 142-ը նախատեսված է մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստի հաշվառման համար:

Ենթաբաժին 142-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1420 «Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով», 1421 «Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով»:

Ենթաբաժին 142-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվը պասիվային է՝ կրեդիտում արտացոլվում են հատկացումները հնարավոր կորուստների պահուստին, իսկ դեբետում^a դրանց ելքագրումը: Յուրաքանչյուր ակտիվի գծով պահուստավորումն իրականացվում է տվյալ ակտիվի հիմնական և նրա գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ հաշիվների հանրագումարի նկատմամբ:

Ենթաբաժին 143 «Կենտրոնական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր»

Ենթաբաժին 143-ը նախատեսված է ռեպո համաձայնագրերի շրջանակներում վաճառված այն արժեթղթերի համար, որոնք մինչև վաճառքը դասակարգված են եղել որպես մինչև մարման ժամկետը պահվող:

Ենթաբաժին 143-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1430 «Կենտրոնական բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր», 1431 «Բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր», 1432 «Վարկային կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր», 1433 «Ներդրումային ընկերություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր», 1434 «Ապահովագրական ընկերություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր», 1432 «Այլ ֆինանսական կազմակերպություններին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր»: Արժեթղթերի հետագա չափումը տարվում է նույն եղանակով, ինչ որ մինչև ռեպո համաձայնագրերի շրջանակներում վաճառելը:

Հաշիվ 1430 «Կենտրոնական բանկերին ռեպո համաձայնագրերով վաճառված մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 1430-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կենտրոնական բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի շրջանակներում վաճառված արժեթղթերը, իսկ կրեդիտում դրանց վերադարձը:

14300 «ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերով վաճառված ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի վերադասակարգման արդյունքում՝ արժեթղթի հաշվեկշռային արժեքի չափով՝

ԴԿ - 14300

ԿԿ - Համապատասխան արժեթղթի հաշիվ

Միաժամանակ կատարվում է պայմանագիրը արտացոլող գրանցում՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 34000

Հաշիվը կրեդիտագրվում է ռեպո համաձայնագրի ավարտին՝

ԴԿ - Համապատասխան արժեթղթի հաշիվ

ԿԿ - 14300

Միաժամանակ կատարվում է գումարի վերադարձը արտացոլող գրանցում՝

ԴԿ - 34000

Կտ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժիններ 143-ում, 144-ում, 145-ում և 146-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվ 14300:

ԲԱԺԻՆ 15 «ՊԱՀԱՆՋՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ»

Բաժին 15-ը նախատեսված է ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կազմակերպության պահանջների հաշվառման համար:

Բաժին 15-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

150 «Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ»,

151 «Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ»,

152 «Այլ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների գծով»,

153 «Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով»:

Հաշվառումն իրականացվում է միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտների, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ կառավարության կողմից ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա:

Արտարժույթով արտահայտված ակտիվները վերագնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 21-ի:

Ենթաբաժին 150 «Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ»

Ենթաբաժին 150-ը նախատեսված է ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկերի և փոխառությունների հաշվառման համար:

Ենթաբաժին 150-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1500 «Բանկերին տրված վարկեր և փոխառություններ», 1501 «Վարկային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ», 1502 «Ներդրումային ընկերություններին տրված վարկեր և փոխառություններ», 1503 «Ապահովագրական ընկերություններին տրված վարկեր և փոխառություններ», 1504 «Այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ»:

Հաճախորդներին տրված վարկերի և այլ փոխատվությունների հաշվառումն իրականացվում է ՀՀՄՍ 39-ի և այլ նորմատիվ ակտերի համաձայն:

Արտարժույթով արտահայտված ակտիվները վերագնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 21-ի:

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում վարկերի, փոխատվությունների տրամադրումը և դրանց դիմաց տոկոսների հաշվեգրումը, իսկ կրեդիտում՝ վարկերի ու փոխատվությունների մարումը, տոկոսների ստացումը, ինչպես նաև մայր գումարի ու տոկոսների դուրսգրումը:

Հաշիվ 1500 «Բանկերին տրված վարկեր և փոխառություններ»

1-ին կարգի հաշիվ 1500-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են կազմակերպության կողմից բանկերին տրամադրված վարկերը՝ այդ թվում նաև օվերդրաֆտները, օվերնայթները և վարկային գծերը և դրանց գծով հաշվեգրված տոկոսները, իսկ կրեդիտում՝ դրանց ելքագրումը:

15000 «Բանկերին տրված վարկեր և փոխառություններ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից բանկերին տրամադրված վարկերի հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է

ա) կազմակերպության կողմից վարկը տրամադրելիս՝

Դտ 15000 (վարկի գումարի չափով)

Կտ - Դրամական միջոցներ:

Դտ - 15000 (վարկի տրամադրման նպատակով վարկադրույի կողմից կատարված վճարումների գումարի չափով)

Կտ - 19120 (քանզի, նշված վճարները կատարվում են նախքան վարկի տրամադրումը, դրանք պետք է հաշվառվեն որպես ապագա ժամանակաշրջանի ծախսեր, որպեսզի վարկի տրամադրումից հետո ընդգրկվեն արդյունավետ փոխադրույթի հաշվարկում՝

Դտ - 19120

Կտ. - Դրամական միջոցներ (կատարված վճարումների գումարի չափով):

ԴԿ - 38700 (նշված վճարները վարկառուի կողմից կատարվում են նախքան վարկի տրամադրումը և պետք է հաշվառվեն որպես ապագա ժամանակաշրջանի եկամուտներ, որպեսզի վարկի տրամադրումից հետո ընդգրկվեն արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկում՝

ԴԿ.-Դրամական միջոցներ (կատարված վճարումների գումարի չափով
ԿԿ - 38700)

ԿԿ - 15000 (վարկի ստացման նպատակով վարկառուի կողմից կատարված վճարումների գումարի չափով):

Այն դեպքում, երբ որոշում է կայացվում վարկ չտրամադրել, վարկի գծով կատարված ծախսերը և ստացված գումարները (այն գումարները, որոնք կազմակերպությունը ստանում է վարկավորման հարցը դիտարկելու համար), որոնք մինչ այդ ճանաչվել էին որպես ապագա ժամանակաշրջանների ծախսեր և եկամուտներ ճանաչվում են ծախս և եկամուտ՝

ԴԿ - 38700

ԿԿ - 62100

ԴԿ - 71000

ԿԿ - 19120:

բ) վարկի ամորտիզացված արժեքով հաշվառման ժամանակ՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված եկամտի չափով՝

ԴԿ - 15000

ԿԿ - 60100:

Հաշիվը կրեդիտագրվում է

ա) վարկի անվանական տոկոսադրույքի հիման վրա հաշվարկված ստացման ենթակա տոկոսների չափով՝

ԴԿ - 15001

ԿԿ - 15000

բ) վարկի մարումների ժամանակ՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 15000:

Վարկի տարեկան սպասարկման վճարը ստանալու պահին (առկայության դեպքում) կատարվում է եկամտի ճշգրտում, սպասարկման վճարի չափով ձևափոխելով տոկոսային եկամուտը ոչ տոկոսայինի՝

ԴԿ - 60100

ԿԿ - 62100

Վարկի վաղաժամկետ մարման դեպքում կատարվում են հետևյալ թղթակցումները՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 15000

ԿԿ - 60100 եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է ավյալ պահի դրությամբ վճարման ենթակա գումարը կամ

ԴԿ - 60100,

եթե ավյալ պահի դրությամբ վճարման ենթակա գումարը գերազանցում է ակտիվի հաշվեկշռային արժեքը

15001 «Բանկերին տրված վարկերից և փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է բանկերին տրամադրված վարկերի և փոխառությունների գծով ստացման ենթակա տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է բանկերին տրամադրված վարկերի գծով կուտակված, բայց դեռևս չվճարված անվանական տոկոսների չափով՝

ԴԿ - 15001

ԿԿ - 15000

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 15001

ԿԿ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է բանկերին տրամադրված վարկերի գծով կուտակված տոկոսները ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ

Կտ - 15001:

Արժեզրկված վարկերի տոկոսների հաշվեգրումը չի դադարեցվում:

Ենթաաժիններ 150-ում և 151-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 2-րդ կարգի հաշիվներ 15000-ի և 15001-ի դեպքում, բացառությամբ օվերդրաֆտների, օվերնայթների և վարկային գծերին (այն վարկային գծերին, որոնց տրամադրման պայմանները նման են օվերդրաֆտների տրամադրման պայմաններին) վերաբերվող հաշիվներից, որոնց հաշվառումը իրականացվում է գծային եղանակով, եթե կազմակերպությունը չի կարող կանխատեսել այդ ակտիվների ապագա դրամական հոսքերը:

Ենթաբաժին 152 «Այլ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների գծով»

Ենթաբաժին 152-ում ընդգրկված հաշիվները ակտիվային են:

Ենթաբաժին 152-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1520 «Կարճաժամկետ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ արտարժույթի առքուվաճառքի գծով», 1521 «Կարճաժամկետ պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ այլ հաշվարկների գծով», 1522 «Դեպոզիտներ»:

Ենթաբաժին 152-ի հաշիվներում արտացոլվում են բանկի կողմից իրականացվող կարճ ժամկետ ունեցող (2 օր) սփոթ տիպի գործարքների, ինչպես նաև այլ հաշվարկների գծով պահանջները: Ենթաբաժնի հաշիվներում արտացոլվում են ակրեդիտիվային կամ այլ գործառնությունների իրականացման նպատակով այլ բանկերում կամ ֆինանսական կազմակերպություններում դեպոզիտներ (սառեցված) գումարները:

Ենթաբաժին 153 «Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով»

Ենթաբաժին 153-ում ընդգրկված հաշիվները պասիվային են:

Ենթաբաժին 153-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1530 «Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով», 1531 «Վարկերի հնարավոր կորուստների պահուստ կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպությունների գծով»:

Պահուստավորումն իրականացվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրա գծով հաշվեգրված, բայց դեռևս չստացված տոկոսների և այլ գումարների հանրագումարի նկատմամբ:

Հաշիվ 1530 «Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպությունների գծով»

1-ին կարգի հաշիվ 1530-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն պասիվային են՝ կրեդիտում արտացոլվում են կազմակերպության կողմից բանկերին տրամադրված վարկերի գծով իրականացված պահուստավորումը, իսկ դեբետում՝ դրա ելքագրումը:

15300 «Վարկերի հնարավոր կորուստների պահուստ բանկերի գծով» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից բանկերին տրամադրված վարկերի գծով իրականացրած պահուստավորման հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է պահուստավորումն իրականացնելիս՝

Դտ - 73000

Կտ - 15300:

Հաշիվը դեբետագրվում է

Դտ - 15300

Կտ - 63000:

Ընդ որում, պահուստի գումարը հաշվարկվում է 15000 և 15001 հաշիվների հանրագումարի նկատմամբ:

ԲԱԺԻՆ 16 «ՊԱՀԱՆՋՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՉՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏԱՄԲ»

Բաժին 16-ը նախատեսված է ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց նկատմամբ կազմակերպության պահանջների արտացոլման համար:

Բաժին 16-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

160 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ»,

161 «Հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ»,

162 «Այլ անձանց տրված վարկեր և փոխառություններ»,

163 «Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ»,

164 «Կազմակերպության հետ կապված հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին տրված վարկեր և փոխառություններ»,

165 «Կազմակերպության հետ կապված այլ անձանց տրված վարկեր և փոխառություններ»,

166 «Վարկերի հնարավոր կորուստների պահուստ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց գծով»:
Ենթաբաժիններ 160-ում, 161-ում, 162-ում, 163-ում, 164-ում և 165-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ բաժին 15-ում ընդգրկված համապատասխան հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 166-ում ընդգրկված հաշիվները կոնտրակտիվային են: Ենթաբաժին 166-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են վարկերի հնարավոր կորուստների համար ստեղծվող պահուստներին հատկացումների հաշվառման համար:

ԲԱԺԻՆ 17 «ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ»

Բաժին 17-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

170 «Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ»,

171 «Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ»,

172 «Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց հետ»:

Հաշվառումն իրականացվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն: Սույն բաժնի հաշիվներում հաշվառվում են կազմակերպության կողմից այլ անձանց հետ կնքված այն համաձայնագրերը, որոնք տվյալ անձանց համար հանդիսանում են ռեպո համաձայնագրեր՝ համաձայն ՀՀՄՍ 39-ի:

Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց են տրվում այլ անձանց նկատմամբ բանկի պահանջների աճը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը: Հաշվառումը տարվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ: Բաժնում ընդգրկված հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ բաժին 16-ում ընդգրկված հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 170 «Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ»

Ենթաբաժին 170-ը նախատեսված է կենտրոնական բանկերի կողմից կազմակերպության հետ կնքված ռեպո համաձայնագրերի հաշվառման համար:

Ենթաբաժին 170-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1700 «Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ»:

Հաշիվ 1700 «Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ»

1-ին կարգի հաշիվ 1700-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են ՀՀ կենտրոնական բանկի հետ կնքված ռեպո համաձայնագրերի շրջանակներում այն գործարքները, որտեղ կազմակերպությունը սկզբնապես ձեռք է բերել արժեթղթեր կամ արտարժույթ, դրանց դիմաց վճարելով ՀՀ դրամով:

17000 «Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերի հետ կնքված այն ռեպո համաձայնագրերի համար, որտեղ կազմակերպությունը սկզբնապես ձեռք է բերել արժեթղթեր կամ արտարժույթ, դրանց դիմաց վճարելով ՀՀ դրամով:

Հաշիվը դեբետագրվում է

ա) պայմանագրում նշված գումարի չափով՝

ԴԿ - 17000

ԿԿ - Դրամական միջոցներ

բ) պայմանագրի ամորտիզացված արժեքով հաշվառման ժամանակ՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված եկամտի չափով՝

ԴԿ - 17000

ԿԿ - 60200:

Միաժամանակ կատարվում է գրանցում արտահաշվեկշռային բաժին 82-ի համապատասխան հաշվում:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

ա) ռեպո համաձայնագրի գծով տոկոսադրույքին համապատասխան ստացման ենթակա տոկոսների գումարների չափով՝

ԴԿ - 17001

ԿԿ - 17000

բ) ռեպո համաձայնագրի ավարտին, այն է գումարը հետ ստանալիս՝

Դպ - Դրամական միջոցներ

Կտ - 17000:

Միաժամանակ, արտահաշվեկշռային բաժին 82-ի համապատասխան հաշվից ձեռք բերված արժեթուղթը ապաճանաչվում է:

17001 «Կենտրոնական բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերից հաշվեգրված տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ռեպո համաձայնագրի գծով տոկոսը հաշվեգրելիս՝

Դպ - 17001

Կտ - 17000

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

Դպ - 17001

Կտ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է տոկոսը և այլ գումարները մարելիս՝

Դպ - Դրամական միջոցներ

Կտ - 17001:

Բաժին 17-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 1-ին կարգի հաշիվներ 17000 և 17001:

ԲԱԺԻՆ 18 «ԱՅԼ ԳՈՐԾԱՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ»

Այս բաժինը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

180 «Ակրեդիտիվներ»,

181 «Երաշխիքներ և երաշխավորություններ»,

182 «Ֆինանսական վարձակալություն»,

183 «Արժեթղթերի փաթեթի կառավարում»,

184 «Արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումարներ»,

185 «Արժեթղթերի պահառության գծով ստացվելիք գումարներ»;

186 «Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ»,

187 «Խորհրդատվության գծով ստացվելիք գումարներ»,

188 «Հեջավորման գործիքներ»,

189 «Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև»:

Բաժնում ընդգրկված հաշիվներն ակտիվային են՝ դեբետում ցույց է տրվում բանկի ունեցած պահանջների ավելացումը, իսկ կրեդիտում՝ դրանց նվազումը:

Արտարժույթով արտահայտված ակտիվները վերազնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 21-ի:

Ենթաբաժին 180 «Ակրեդիտիվներ»

Ենթաբաժին 180-ը նախատեսված է տրամադրված ակրեդիտիվների հաշվառման համար:

Ենթաբաժին 180-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1800 «Ֆինանսական կազմակերպություններին տրված ակրեդիտիվներ», 1801 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպություններին տրված ակրեդիտիվներ», 1802 «Հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին տրված ակրեդիտիվներ», 1803 «Այլ անձանց տրված ակրեդիտիվներ»:

Հաշիվ 1800 «Ֆինանսական կազմակերպություններին տրված ակրեդիտիվներ»

1-ին կարգի հաշիվ 1800-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են ֆինանսական կազմակերպություններին տրամադրված ակրեդիտիվները և դրանց դիմաց տոկոսների հաշվեգրումը, իսկ կրեդիտում՝ ակրեդիտիվների մարումը, ինչպես նաև տոկոսների դուրսգրումը:

18000 «Բանկերին տրված ակրեդիտիվներ» - այս հաշվում հաշվառվում են ակրեդիտիվ բացող (էմիտենտ) բանկի կողմից այլ բանկերին տրված ակրեդիտիվների գումարները: Ակրեդիտիվ բացելիս (պայմանագիրը կնքելիս) բանկը գրանցում է կատարում հետհաշվեկշռային 80100 «Ակրեդիտիվներ» հաշվում:

ա) Առանց հաճախորդ բանկի թղթակցային հաշիվը սառեցնելու ակրեդիտիվի դեպքում մատակարարի հաշիվն ակցեպտավորելիս (հոժարագրելիս) ձևակերպվում է՝

ԴԿ - 18000

ԿԿ - 36100

Վճարում կատարելիս՝

ԴԿ - 36100

ԿԿ - Դրամական միջոցներ

Ակրեդիտիվի ամորտիզացված արժեքով հաշվառման ժամանակ՝ արդյունավետ տոկոսադրույքի չափով՝

ԴԿ - 18000

ԿԿ - 60400:

Ակրեդիտիվի գծով տոկոսադրույքին համապատասխան ստացման ենթակա գումարի չափով՝

ԴԿ - 18001

ԿԿ - 18000

Հաճախորդ բանկից փոխհատուցում ստանալիս տրվում է հետևյալ ձևակերպումը՝

ԴԿ - Հաճախորդի թղթակցային հաշիվ, դրամական միջոցներ

ԿԿ - 18000

բ) հաճախորդի հաշիվը սառեցնելու դեպքում տրվում են հետևյալ ձևակերպումները՝

ԴԿ - Հաճախորդի հաշիվ

ԿԿ - 36200

Վճարում կատարելիս՝

ԴԿ - 36200

ԿԿ - Թղթակցային հաշիվ

18001 «Բանկերին տրված ակրեդիտիվների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - այս հաշվում հաշվառվում են բանկի կողմից այլ բանկերին տրված ակրեդիտիվների դիմաց հաշվեգրված տոկոսները, ինչպես նաև տույժերը և տուգանքները:

Հաշիվը դեբետագրվում է ստացման ենթակա գումարների չափով՝

ԴԿ - 18001

ԿԿ - 18000

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 18001

ԿԿ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է տոկոսներն ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 18001:

Ենթաբաժին 180-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվներ 18000-ի և 18001-ի դեպքում:

Ենթաբաժին 181 «Երաշխիքներ և երաշխավորություններ»

Ենթաբաժին 181-ը նախատեսված է տրամադրված երաշխիքների և երաշխավորությունների գծով կատարված վճարումների հաշվառման համար:

Ենթաբաժին 181-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1810 «Երաշխիքներ և երաշխավորություններ ֆինանսական կազմակերպությունների համար», 1811 «Երաշխիքներ և երաշխավորություններ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող առևտրային կազմակերպությունների համար», 1812 «Երաշխիքներ և երաշխավորություններ հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների համար», 1813 «Երաշխիքներ և երաշխավորություններ այլ անձանց համար»:

Հաշիվ 1810 «Երաշխիքներ և երաշխավորություններ ֆինանսական կազմակերպությունների համար»

1-ին կարգի հաշիվ 1810-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են ֆինանսական կազմակերպություններին երաշխիքների և երաշխավորությունների գծով կազմակերպության կողմից կատարված վճարումները և դրանց դիմաց ստացվելիք վճարների հաշվեգրումը, իսկ կրեդիտում՝ երաշխիքների և երաշխավորությունների մարումը, ինչպես նաև տոկոսների դուրսգրումը:

18100 «Երաշխիքներով և երաշխավորություններով կատարված վճարումներ բանկերի համար» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից բանկերի համար տրված երաշխիքների և երաշխավորությունների դիմաց կատարված վճարումների հաշվառման համար: Երաշխիքների և երաշխավորությունների հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտի համաձայն: Այս պահանջների արժեգրվման դեպքում նրանց գծով կատարվում է պահուստավորում և դուրսգրում՝ ըստ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»:

Հաշիվը դեբետագրվում է

ա) տրված երաշխիքների և երաշխավորությունների դիմաց վճարում կատարելիս՝

ԴԿ - 18100

ԿԿ - Դրամական միջոցներ

բ) երաշխիքի կամ երաշխավորության ամորտիզացված արժեքով հաշվառման ժամանակ՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված գումարի չափով՝

ԴԿ - 18100

ԿԿ - 61200:

Գործարքի հետ կապված միջնորդավճարների ամորտիզացված արժեքի հաշվարկի մեջ ընդգրկված մոտեցումը նույնն են, ինչ որ վարկերի դեպքում:

Հաշվը կրեդիտագրվում է՝

ա) վճարված գումարի դիմաց փոխհատուցում ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ, հաճախորդ բանկի թղթակցային հաշիվ

ԿԿ - 18100

բ) տրված անհուսալի երաշխիքների գծով տոկոսադրույքին համապատասխան ստացման ենթակա գումարի չափով՝

ԴԿ - 18101

ԿԿ - 18100

գ) տրված անհուսալի երաշխիքները հաշվեկշռից դուրս գրելիս՝

ԴԿ - Ակտիվների հնարավոր կորուստների դուրսգրման պահուստների հաշիվներ

ԿԿ - 18100:

18101 «Բանկերի համար տրված երաշխիքների և երաշխավորությունների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից բանկերի համար տրված երաշխիքների և երաշխավորությունների գծով կարառված վճարների դիմաց հաշվարկված, սակայն դեռ չստացված տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ստացվելիք վճարների գումարի չափով՝

ԴԿ - 18101

ԿԿ - 18100,

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 18101

ԿԿ - 66301

Հաշիվը կրեդիտագրվում է վճարներն ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ, հաճախորդ բանկի թղթակցային հաշիվ

ԿԿ - 18101:

Ենթաբաժին 181-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվներ 18100-ի և 18101-ի դեպքում:

Ենթաբաժին 182 «Ֆինանսական վարձակալություն»

Ենթաբաժին 182-ը նախատեսված է տրամադրված ֆինանսական վարձակալության հաշվառման համար:

Ենթաբաժին 182-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1820 «Ֆինանսական կազմակերպություններից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ», 1821 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ», 1822 «Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ ֆինանսական կազմակերպություններից», 1823 «Ֆինանսական վարձակալության դիմաց չվաստակած ֆինանսական եկամուտներ ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից»:

Ենթաբաժին 182-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են ֆինանսական վարձակալության հաշվառման համար: Հաշվառումը տարվում է համաձայն ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի:

Հաշիվ 1820 «Ֆինանսական կազմակերպություններից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ»

1-ին կարգի հաշիվ 1820-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են ֆինանսական կազմակերպություններից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ, իսկ կրեդիտում՝ ֆինանսական վարձակալության մարումը:

18200 «Բանկերից Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» - հաշիվը նախատեսված է բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները հաշվառելու համար:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցները ֆինանսական վարձակալությամբ բանկերին տրամադրելիս՝

Դր - 18200

Կր - 607 ենթաբաժնի համապատասխան հաշիվները (ակտիվի իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի տարբերության չափով)

Կր - ակտիվի համապատասխան հաշիվը

Կր - 1822, 1823 հաշիվներում ընդգրկված համապատասխան հաշիվները:

Հաշիվը կրեդիտագրվում է բանկերին տրամադրված ֆինանսական վարձակալության գծով լրիվ կամ մասնակի վճարում ստանալիս՝

Դր - Դրամական միջոց

Կր - 18200:

Ենթաբաժին 182-ի 1-ին կարգի հաշիվներ 1822-ում և 1823-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 18200-ի դեպքում:

Ենթաբաժին 183 «Արժեթղթերի փաթեթի կառավարում»

Ենթաբաժին 183-ը նախատեսված է արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում տրամադրված ծառայությունների դիմաց ստացվելիք գումարների հաշվառման համար:

Ենթաբաժին 183-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1830 «Ֆինանսական կազմակերպություններից արժեթղթերի փաթեթի կառավարման գծով ստացվելիք գումարներ», 1831 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից արժեթղթերի փաթեթի կառավարման գծով ստացվելիք գումարներ»:

Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում կառավարվող ակտիվները չեն գրանցվում սույն հաշիվների ներքո, քանի որ դրանք չեն հանդիսանում կազմակերպության սեփականությունը:

Ենթաբաժնի հաշիվները դեբետագրվում են ծառայության մատուցման դեպքում, թղթակցելով համապատասխան եկամուտների հաշիվների հետ:

Ենթաբաժին 184 «Արժեթղթերով գործարքների գծով ստացվելիք գումարներ»

Ենթաբաժին 184-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ ենթաբաժին 183-ում ընդգրկված հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 185 «Արժեթղթերի պահառության գծով ստացվելիք գումարներ»

Ենթաբաժին 185-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ ենթաբաժին 183-ում ընդգրկված հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 186 «Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ»

Ենթաբաժին 186-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ ենթաբաժին 183-ում ընդգրկված հաշիվների դեպքում: Հաշիվը կիրառվում է ներդրումային ֆոնդերի կառավարիչների կողմից:

Ենթաբաժին 187 «Խորհրդատվության գծով ստացվելիք գումարներ»

Ենթաբաժին 187-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ ենթաբաժին 183-ում ընդգրկված հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 188 «Հեջավորման գործիքներ»

Ենթաբաժին 188-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են հեջավորման ածանցյալ և ոչ ածանցյալ գործիքների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 32, ՀՀՄՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

Ենթաբաժին 189 «Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև»

Ենթաբաժին 189-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են այն գումարների հաշվառման համար, որոնք առաջանում են բանկի և մասնաճյուղերի միջև փոխադարձ հաշվարկների արդյունքում: Հաշվետվություն ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ այս հաշիվը ենթակա է գրոյացման, մնացորդները դասակարգվում են համապատասխան հաշիվներին: Եթե դա անհնար է, ապա անհրաժեշտ է առաջացած մնացորդը գրանցել 19314 կամ 43008 հաշիվների վրա: Հաջորդ օրը մնացորդը վերականգնվում է այս հաշվին:

ԲԱԺԻՆ 19 «ՍՏԱՑՎԵԼԻՔ ԳՈՒՄԱՐՆԵՐ»

Բաժին 19-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

190 «Դեբիտորական պարտքեր»,

191 «Կանխավճարներ»,

192 «Ստացվելիք շահաբաժիններ ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից»,

193 «Ստացվելիք այլ գումարներ»,

194 «Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»:

Ենթաբաժին 190 «Դեբիտորական պարտքեր»

Ենթաբաժին 190-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են բյուջեի և այլ անձանց նկատմամբ դեբիտորական պարտքերի հաշվառման համար:

Ենթաբաժին 190-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1900 «Դեբիտորական պարտքեր»:

Արտարժույթով արտահայտված ակտիվները վերագնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 21-ի:

Ենթաբաժին 191 «Կանխավճարներ»

Ենթաբաժին 191-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են բյուջեի սոցիալական ապահովագրության գծով, ինչպես նաև այլ անձանց վճարած կանխավճարների հաշվառման համար:

Ենթաբաժին 191-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 1910 «Կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին», 1911 «Կանխավճարներ և գերավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 1911 «Ապագա ժամանակաշրջանի ծախսեր»:

Հաշիվ 1910 «Կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին»

1-ին կարգի հաշիվ 1910-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են աշխատակիցներին և մատակարարներին տրված կանխավճարների գումարները, իսկ կրեդիտում՝ նրանց դուրսգրումը:

19100 «Կանխավճարված աշխատավարձ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության աշխատակիցներին կանխավճարային կարգով վճարված աշխատավարձի հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է կանխավճարը տալիս՝

Դր - 19100

Կր - Դրամական միջոցներ

Հաշիվը կրեդիտագրվում է կանխավճարված աշխատավարձի գծով դեբիտորական պարտքը ծախսերով փակելիս՝

Դր - 71100, 71101

Կտ - 19100:

19101 «Կազմակերպության աշխատակիցներին տրված առհաշիվ գումարներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության աշխատակիցներին առհաշիվ տրված այնպիսի գումարների հաշվառման համար, ինչպիսիք են՝ գործուղումների հետ կապված կանխավճարները, վճարներն ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար և այլն:

Հաշիվը դեբետագրվում է առհաշիվ գումարներ տրամադրելիս՝

Դտ - 19101

Կտ - Դրամական միջոցներ

Հաշիվը կրեդիտագրվում է առհաշիվ տրված գումարի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն ստանալիս: 19101 հաշվի գումարը դուրս է գրվում այն հաշիվների վրա, որոնց գծով օգտագործվել են այդ միջոցները՝

Դտ - Ծախսեր, ակտիվային հաշիվներ և պասիվային հաշիվներ

Կտ - 19101:

19102 «Կանխավճարներ մատակարարներին» - հաշիվը նախատեսված է մատակարարներին ապրանքների և ծառայությունների համար տրված կանխավճարների հաշվառման համար: Ապրանքների ստացման կամ ծառայությունների մատուցման դեպքում կանխավճարներն այս հաշվից փոխանցվում են համապատասխան ակտիվի կամ ծախսի հաշիվ:

Հաշիվը դեբետագրվում է կանխավճար տալիս՝

Դտ - 19102

Կտ - Դրամական միջոցներ

Հաշիվը կրեդիտագրվում է համապատասխան ապրանքները կամ ծառայությունները ստանալիս՝

Դտ - Ծախսեր, ակտիվային հաշիվներ

Կտ - 19102:

Հաշիվ 1911 «Կանխավճարներ և գերավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

1-ին կարգի հաշիվ 1911-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են շահութահարկի, եկամտահարկի, ԱԱՀ-ի, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովագրության գծով վճարված կանխավճարների և գերավճարների հաշվառման համար:

19110 «Կանխավճարներ շահութահարկի գծով» - հաշիվը նախատեսված է շահութահարկի գծով բյուջեին վճարված կանխավճարների և գերավճարների հաշվառման համար:

Կանխավճար կամ գերավճար կատարելիս ձևակերպվում է՝

Դտ - 19110

Կտ - Դրամական միջոցներ

Պարտավորության ժամկետը լրանալիս կանխավճարները դուրս են գրվում այս հաշվից՝ թղթակցելով պարտավորությունների համապատասխան հաշվի հետ՝

Դտ - 39100

Կտ - 19110:

Ենթաբաժիններ 192-ի և 193-ի մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 19102-ի դեպքում:

Ենթաբաժին 194-ում ընդգրկված հաշիվները կոնտրակտիվային են և նախատեսված են վարկերի հնարավոր կորուստների համար ստեղծվող պահուստներին հատկացումների հաշվառման համար:

ԲԱԺԻՆ 20 «ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՄԵԹՈՂՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ»

Բաժին 20-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 200 «Ասոցիացված և դուստր կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ», 201 «Այլ անձանց կանոնադրական կապիտալներում ինքնարժեքով հաշվառվող ներդրումների հնարավոր կորուստների պահուստ»:

Բաժին 200 Ասոցիացված և դուստր կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ»

Ենթաբաժին 200-ում ներառված հաշիվները նախատեսված են կապակցված կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումների հաշվառման համար:

Հաշիվ 2000 «Ասոցիացված կազմակերպություններում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ»

20000 «Ասոցիացված բանկերում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից բանկերի կանոնադրական կապիտալում նշանակալի ազդեցություն ձևավորող մասնակցությունների հաշվառման համար:

Ինքնարժեքի մեթոդի կիրառման դեպքում ներդրումը գրանցվում է ինքնարժեքով (ձեռքբերման արժեքով): Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներդրումներից եկամուտներն արտացոլվում են միայն այն չափով, որքանով որ բանկը շահաբաժին է ստանում ներդրման օբյեկտի՝ ձեռքբերման ամսաթվից հետո կուտակված չբաշխված զուտ շահույթից:

Հաշիվը դեբետագրվում է կապակցված կազմակերպություններում ներդրում կատարելիս, ձեռքբերման արժեքով՝

Դ-դ - 20000

Կ-դ - Դրամական միջոցներ

Եթե ներդրումը ձեռք է բերվել այլ ակտիվների կամ բանկի բաժնետոմսերի փոխանակման միջոցով՝

Դ-դ - 20000

Կ-դ - Այլ ակտիվներ, 50 «Կանոնադրական հիմնադրամ»

Ասոցիացված կազմակերպություն հանդիսացող բանկի կողմից շահաբաժինները հայտարարելուց հետո դրանք գրանցվում են 19200 «Ասոցիացված բանկերում ինքնարժեքի մեթոդով հաշվառվող ներդրումներից ստացվելիք շահաբաժիններ» հաշիվներում:

Այս ներդրումների արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի համաձայն:

Ենթաբաժիններ 200-ի մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 20000-ի դեպքում:

ԲԱԺԻՆ 21 «ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ»

Բաժին 21-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 210 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ», 211 «Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցներ»:

Այս բաժնում ընդգրկված է հաշիվների հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտների համաձայն: Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները ձեռքբերման ամսաթվին գրանցվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված տվյալ օրվա փոխարժեքով, իսկ հետագայում չեն ենթարկվում արտարժույթային վերազնահատման:

Ենթաբաժին 210 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ»

Ենթաբաժին 210-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են հիմնական միջոցների, նրանց մաշվածության և արժեզրկման հաշվառման համար:

Ենթաբաժին 210-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 2100 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ», 2101 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների կուտակված մաշվածություն», 2102 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեզրկում»:

Հաշիվ 2100 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ»

1-ին կարգի հաշիվ 2100-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների հաշվառման համար:

21000 «Հողամասեր» - հաշիվը նախատեսված է կազմակերպության պատկանող հողամասերի, այդ թվում՝ շինարարական նպատակներով, հաշվառման համար: Հողի արժեքը դուրս չի գրվում (ամորտիզացվում), որովհետև այս տեսակի ակտիվի ծառայության ժամկետը անսահմանափակ է:

Հաշիվը դեբետագրվում է հողամասի (հողի) ձեռքբերման դեպքում կամ վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է հողամասի (հողի) օտարման դեպքում՝ հաշվեկշռային արժեքի չափով և հողի վերագնահատման արդյունքում՝ հողի իրական և հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

21001 «Շենքեր, շինություններ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության շենքերում (տարածքում) կատարված ընդհանուր ներդրումների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է շենքի և շինությունների ձեռքբերման և կապիտալ ներդրումների կատարման դեպքում, ինչպես նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ շենքի և շինությունների իրական հաշվեկշռային արժեքների դրական տարբերության չափով:

Հաշիվը կրեդիտագրվում է շենքի և շինությունների օտարման և դուրսգրման դեպքում: Հաշիվը կրեդիտագրվում է նաև շենքի և շինությունների վերագնահատման արդյունքում՝ դրանց իրական հաշվեկշռային արժեքների բացասական տարբերության չափով:

21002 «Գույք և գրասենյակային սարքավորումներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության գործունեության համար օգտագործվող գույքի և գրասենյակային սարքավորումների (օրինակ՝ սեղան, աթոռ, պահարան, բազկաթոռ, դարակաշար, չիրկիվող պահարան և այլն) համար կատարված ներդրումների հաշվառման համար:

Հաշվի հաշվառումն իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 21001-ի դեպքում:

21003 «Համակարգչային և այլ տեխնիկա» - հաշիվը նախատեսված է կազմակերպության գործունեության համար օգտագործվող համակարգիչների և հաղորդակցման սարքավորումների համար կատարված ներդրումների հաշվառման համար:

Հաշվի հաշվառումն իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 21001-ի դեպքում:

21004 «Փոխադրամիջոցներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության գործունեության համար օգտագործվող փոխադրամիջոցների համար կատարված ներդրումների հաշվառման համար:

Հաշվի հաշվառումն իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 21001-ի դեպքում:

21005 «Այլ հիմնական միջոցներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության գործունեության համար օգտագործվող այն հիմնական միջոցների համար կատարված ներդրումներ ի հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն: Հաշվի հաշվառումն իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 21001-ի դեպքում:

21006 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից ֆինանսական վարձակալության վերցված հիմնական միջոցները: Հաշվի հաշվառումն իրականացվում է համաձայն ՀՀՄՍ 17-ի:

Հաշիվը դեբետագրվում է հիմնական միջոցների վարձակալության վերցման դեպքում՝

Դր - 21006

Կր - ենթաբաժին 380-ի համապատասխան հաշիվ:

Հաշիվը դեբետագրվում է նաև վարձակալության վերցված հիմնական միջոցների վերագնահատման, նաև դրանցում կապիտալ ներդրումների կատարման դեպքում:

Վարձակալության վերցված հիմնական միջոցների գնման դեպքում հաշիվը կրեդիտագրվում է՝

Դր - Հիմնական միջոցներ

Կր - 21006:

Հաշիվ 2101 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների կուտակված մաշվածություն»

1-ին կարգի հաշիվ 2101-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածության հաշվառման համար: Հիմնական միջոցների մաշվածությունը իրականացվում է դրանց օգտակար ծառայության ընթացքում՝ բանկի կողմից ընտրված մեթոդով: Հաշիվների կրեդիտում գրանցվում են հիմնական միջոցների մաշվածության ծախսերի կուտակումները:

21010 «Շենքերի և շինությունների կուտակված մաշվածություն» - հաշիվը նախատեսված է կազմակերպության շենքերի կուտակված մաշվածության հաշվառման համար:

Դր - 71130

Կր - 21010

Մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ 21001-ի դեպքում:

Հաշիվ 2102 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեզրկում»

1-ին կարգի հաշիվ 2102-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների արժեզրկման հաշվառման համար:

21020 «Հողամասերի կուտակված արժեզրկում» - հաշիվը նախատեսված է կազմակերպությանը պատկանող հողամասերի կուտակված արժեզրկման հաշվառման համար:

Հաշիվները կրեդիտագրվում են հիմնական միջոցի արժեզրկման դեպքում՝

Դր - 72200

Կտ - 21020

բաժնի համապատասխան հաշիվները:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) արժեզրկման հակադարձման դեպքում՝

Դտ - 21020

Կտ - 66200 կարգի համապատասխան հաշիվը,

բ) ակտիվների լրիվ արժեզրկման ժամանակ՝

Դտ - 21020

Կտ - Ակտիվների համապատասխան հաշիվներ

Ենթաբաժին 211 «Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցներ»

Ենթաբաժին 211-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցների, նրանց մաշվածության և արժեզրկման հաշվառման համար:

Ենթաբաժին 211-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 2110 «Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցներ», 2111 «Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցների կուտակված մաշվածություն», 2112 «Շահագործումից դուրս գտնվող հիմնական միջոցների արժեզրկում»:

Ենթաբաժնում ընդգրկված հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ ենթաբաժին 210-ում ընդգրկված հաշիվների դեպքում:

ԲԱԺԻՆ 22 «ՈՉ ՆՅՈՒՅԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ»

Բաժին 22-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 220 «Շահագործման մեջ գտնվող որոշակի ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ», 221 «Շահագործումից դուրս գտնվող որոշակի ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ», 222 «Շահագործման մեջ գտնվող անորոշ ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ», 223 «Շահագործումից դուրս գտնվող անորոշ ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ»:

Ոչ նյութական ակտիվների և դրանց ամորտիզացիայի ու արժեզրկման հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» և ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» համաձայն: Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները ձեռքբերման ամսաթվին գրանցվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված տվյալ օրվա փոխարժեքով, իսկ հետագայում չեն ենթարկվում արտարժույթային վերագնահատման:

Բաժին 22-ում ընդգրկված հաշիվները հաշվառվում են նույն սկզբունքով, ինչ որ բաժին 21-ում ընդգրկված հաշիվների դեպքում:

ԲԱԺԻՆ 23 «ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՊԱՀՎՈՂ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐ»

Բաժին 23-ը ներառվող հաշիվների հաշվառումը իրականացվում է համաձայն ՖՀՄՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ»: Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները ձեռքբերման ամսաթվին գրանցվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված տվյալ օրվա փոխարժեքով, իսկ հետագայում չեն ենթարկվում արտարժույթային վերագնահատման:

ԲԱԺԻՆ 24 «ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ ԵՎ ՈՉ ՆՅՈՒՅԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ»

Բաժին 24-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 240 «Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում», 241 «Կապիտալ ներդրումներ կազմակերպության ոչ նյութական ակտիվներում», 242 «Կապիտալ ներդրումներ կազմակերպության վարձակալված հիմնական միջոցներում»:

Բաժին 24-ում հաշվառվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման կամ բարելավման համար կատարված, սակայն դեռևս չկապիտալացված ծախսումները:

Ենթաբաժին 240 «Կապիտալ ներդրումներ կազմակերպության հիմնական միջոցներում»

24000 «Կապիտալ ներդրումներ կազմակերպության հիմնական միջոցներում» - այս հաշիվը նախատեսված է կազմակերպության հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ կառուցելու վրա կատարված ծախսումները հաշվառելու համար:

Կապիտալ ներդրումների գծով տրամադրված գումարները կատարողական ակտերի հիման վրա վերագրանցվում են որպես կապիտալ ներդրումներ կազմակերպության հիմնական միջոցներում՝

Դպ - 24000

Կպ - 19102

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցի օբյեկտը շահագործման հանձնելիս՝

Դպ - Հիմնական միջոցների համապատասխան հաշիվ

Կպ - 24000

24000 հաշիվն օգտագործվում է նաև առկա հիմնական միջոցների բարելավմանն ուղղվող ծախսերի հաշվառման համար: Բարելավման աշխատանքներն ավարտելուց հետո այդ ծախսումները կապիտալացվում են՝ ավելացվելով հիմնական միջոցների արժեքին կամ դուրս են գրվում կազմակերպության ծախսերով: Կատարված ծախսումների կապիտալացման կամ ծախսերով դուրսագրման չափանիշները ներկայացված են ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտում:

24010 «Կապիտալ ներդրումներ կազմակերպության ոչ նյութական ակտիվներում» - այս հաշիվը նախատեսված է կազմակերպության ոչ նյութական ակտիվների բարելավման վրա կատարված ծախսումները հաշվառելու համար: Հաշվառման սկզբունքը նույնն է, ինչ որ 24000 հաշվի դեպքում: Բարելավման աշխատանքներն ավարտելուց հետո այդ ծախսումները կապիտալացվում են՝ ավելացվելով ոչ նյութական ակտիվների արժեքին կամ դուրս են գրվում կազմակերպության ծախսերով:

24020 «Կապիտալ ներդրումներ կազմակերպության վարձակալված հիմնական միջոցներում» - այս հաշիվը ներկայացնում է գործառնական վարձակալության համաձայն վարձակալ կազմակերպության տրամադրության տակ գտնվող հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումները հաշվառելու համար: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումները պարբերաբար ամորտիզացվում են կամ դրանց օգտակար ծառայության ժամկետի, կամ վարձակալության տևողության ընթացքում (ներառելով ցանկացած հնարավոր վերականգման ժամանակաշրջան, որի ընթացքում վարձակալությունը կնորացվի)՝ կախված նրանից, թե որ ժամկետն է ավելի կարճ: Հաշվառումը կատարվում է 24000 հաշվի հաշվառման սկզբունքով:

ԲԱԺԻՆ 25 «ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ»

Բաժին 25-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 250 «Պաշարներ», 251 «Թանկարժեք քարեր», 252 «Հուշադրամներ», 253 «Բռնագանձված գրավ», 254 «Սառեցված հաշիվներ», 255 «Հետաձգված հարկային ակտիվներ», 256 «Ներդրումային գույք», 257 «Հաշվարկված տույժեր և տուգանքներ», 258 «Այլ ակտիվները»:

Ենթաբաժին 250 «Պաշարներ»

Պաշարների հաշվառումը կատարվում է ՀՀՄՍ 2-ի համաձայն: Ձեռքբերման պահին դրանք հաշվեկշռում գրանցվում են ինքնարժեքով՝

Դպ - 25000

Կպ - Դրամական միջոցներ

Հաշիվները կրեդիտագրվում են տնտեսական նյութերը և արագամաշ առարկաներն օգտագործման հանձնելու համար պահեստից դուրս գրելիս՝

Դպ - համապատասխան ծախսի հաշիվ

Կպ - 25000:

Ենթաբաժին 251 «Թանկարժեք քարեր»

Ենթաբաժին 251-ը նախատեսված է կազմակերպությունում պահվող և ճանապարհին գտնվող թանկարժեք քարերի հաշվառման համար:

Ենթաբաժին 251-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվը՝ 2510 «Թանկարժեք քարեր»:

Ենթաբաժին 251-ի հաշիվներն ակտիվային են, իսկ դրանց հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ Ենթաբաժին 110-ի համապատասխան 1-ին և 2-րդ կարգի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 252 «Հուշադրամներ»

Ենթաբաժին 252-ը նախատեսված է կազմակերպությունում պահվող և ճանապարհին գտնվող հուշադրամների հաշվառման համար:

Ենթաբաժին 252-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվը՝ 2520 «Հուշադրամներ»:

Ենթաբաժին 252-ի հաշիվներն ակտիվային են, իսկ դրանց հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ Ենթաբաժին 250-ի համապատասխան 1-ին և 2-րդ կարգի հաշիվների դեպքում:

Ենթաբաժին 253 «Բռնագանձված գրավ»

Ենթաբաժին 253-ում ներառված հաշիվները նախատեսված են կազմակերպության կողմից բռնագանձված գրավի հաշվառման համար:

Հաշիվ 2530 «Բռնագանձված գրավ»

1-ին կարգի հաշիվ 2530-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են կազմակերպության կողմից տրամադրված և անշարժ գույքով ապահովված վարկերի և փոխատվությունների չմարման դեպքում բռնագանձված գրավի առարկայի հաշվառման համար:

25300 «Բռնագանձված գրավ-անշարժ գույք» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից տրամադրված և անշարժ գույքով ապահովված վարկերի և փոխատվությունների չմարման դեպքում բռնագանձված անշարժ գույքի տեսքով գրավի առարկայի հաշվառման համար:

Նշված վարկերն ու փոխատվությունները դուրս են գրվում հաշվեկշռից ակտիվների հնարավոր կորուստների պահուստների հաշիվների միջոցներով, իսկ գրավը ճանաչվում է հաշվեկշռում վերջինիս իրական արժեքի և փոխառուի նկատմամբ պահանջի (ներառյալ գործառնական ծախսերը) նվազագույն մեծությամբ՝ միաժամանակ այդ գումարը ճանաչելով եկամուտ:

Դր - վարկ

Կր - պահուստ

Դր - 25300

Կր - վարկ

Դր - պահուստ

Կր - 6300 համապատասխան հաշիվ

Համաձայն օրենսդրության՝ այս ակտիվները պետք է վաճառվեն աճուրդի միջոցով:

Այդ պատճառով դրանց համար ամորտիզացիա չի հաշվարկվում: Գրավը վաճառելիս բանկը տալիս է հետևյալ ձևակերպումները՝

ա) վաճառքի գինը հավասար է գրավի հաշվեկշռային արժեքին՝

Դր - Դրամական միջոցներ

Կր - 25300

բ) վաճառքի գինը բարձր է գրավի հաշվեկշռային արժեքից՝

Դր - Դրամական միջոցներ

Կր - 25300

Կր - 39210

գ) վաճառքի գինը ցածր է գրավի հաշվեկշռային արժեքից՝

Դր - Դրամական միջոցներ

Դր - 720 համապատասխան հաշիվ

Կր - 25300:

25301 «Բռնագանձված գրավ-փոխադրամիջոցներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 25300 հաշվի դեպքում:

25302 «Բռնագանձված գրավ-այլ ակտիվներ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 25300 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 254 «Սառեցված հաշիվներ»

Ենթաբաժին 254-ում ներառված հաշիվները նախատեսված են այլ կազմակերպություններում ունեցած այն հաշիվների հաշվառման համար, որոնց օգտագործումը կասեցված է՝ հաշվի կալանման կամ այլ պատճառներով:

Հաշիվ 2540 «Սառեցված հաշիվներ»

25400 «Սառեցված հաշիվներ կենտրոնական բանկերում» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերում ունեցած այն հաշիվների հաշվառման համար, որոնց օգտագործումը կասեցված է՝ հաշվի կալանման կամ այլ պատճառներով:

25401 «Սառեցված հաշիվներ այլ անձանց մոտ» - հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ 25400 հաշվի դեպքում:

Ենթաբաժին 255 «Հետաձգված հարկային ակտիվներ»

Ենթաբաժին 255-ում ներառված հաշիվը նախատեսված է նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 12 «Շահութահարկ»:

Ենթաբաժին 256 «Ներդրումային գույք»

Ենթաբաժին 255-ում ներառված հաշիվը նախատեսված է այն ակտիվների հաշվառման համար, որոնք համապատասխանում են ՀՀՄՍ 40-ով ներդրումային գույքի համար սահմանված պահանջներին:

Ենթաբաժին 257 «Հաշվարկված տույժեր և տուգանքներ»

Ենթաբաժին 257-ում ներառված հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կնքված պայմանագրերի շրջանակներում հաշվարկված տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Ենթաբաժին 258 «Այլ ակտիվներ»

Ենթաբաժին 258-ում ներառված հաշիվը նախատեսված է այն ակտիվների հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ԿԱՐԳ 3 - 4 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 30 «ԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ»

Բաժին 30-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 300 «Թղթակցային և բանկային հաշիվներ», 301 «Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպությունների թղթակցային և բանկային հաշիվներ», 302 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց բանկային հաշիվներ», 303 «Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց բանկային հաշիվներ»:

Ենթաբաժին 300 «Թղթակցային և բանկային հաշիվներ»

Ենթաբաժին 300-ը նախատեսված է բանկում ֆինանսական կազմակերպությունների թղթակցային և բանկային հաշիվների և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Ենթաբաժին 300-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվը՝ 3000 «Բանկերի թղթակցային հաշիվներ», 3001 «Ֆինանսական կազմակերպությունների բանկային հաշիվներ»:

Հաշիվ 3000 «Բանկերի թղթակցային հաշիվներ»

1-ին կարգի հաշիվ 3000-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն պասիվային են՝ կրեդիտում արտացոլվում են բանկերի թղթակցային հաշիվների մնացորդի և դրա դիմաց հաշվեգրված տոկոսների աճը, դեբետում՝ նվազումը:

30000 «Կենտրոնական բանկերի թղթակցային հաշիվներ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերի թղթակցային հաշիվներում դրամական միջոցների առկայությունն ու շարժը:

Հաշիվը կրեդիտագրվում է կենտրոնական բանկերի թղթակցային հաշիվներին միջոցներ մուտքագրելիս՝

Դր - Դրամական միջոցներ

Կր - 30000

Հաշիվը դեբետագրվում է կենտրոնական բանկերի թղթակցային հաշիվների միջոցներ դիմաց տոկոսներ վճարելիս՝

Դր - 30000

Կր - Դրամական միջոցներ:

30001 «Կենտրոնական բանկերի թղթակցային հաշիվների դիմաց հաշվեգրված տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկի թղթակցային հաշիվների դիմաց վճարվելիք տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է բանկերի թղթակցային հաշիվների միջոցների դիմաց տոկոսների հաշվեգրում կատարելիս՝

ԴԿ - 70000

ԿԿ - 30001

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 71001

ԿԿ - 30001

Հաշիվը դեբետագրվում է բանկերի թղթակցային հաշիվների միջոցներ դիմաց տոկոսներ վճարելիս՝

ԴԿ - 30001

ԿԿ - Դրամական միջոցներ:

30002 «Բանկերի թղթակցային հաշիվներ» - հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ 30000 հաշվի դեպքում:

30003 «Բանկերի թղթակցային հաշիվների դիմաց հաշվեգրված տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ 30001 հաշվի դեպքում:

2-րդ կարգի հաշիվներ 30004-ի և 30005-ի հաշվառումը իրականացվում է թանկարժեք մետաղներով հաշիվները կարգավորող նորմատիվ-իրավական ակտերով:

Բաժին 30-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվներ 30000-ի և 30001-ի դեպքում:

ԲԱԺԻՆ 31 «ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ»

Բաժին 31-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 310 «Պարտավորություններ կենտրոնական բանկերի նկատմամբ», 311 «Պարտավորություններ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովության հիմնադրամի նկատմամբ»:

Ենթաբաժին 310 «Պարտավորություններ կենտրոնական բանկերի նկատմամբ»

Ենթաբաժին 310-ը նախատեսված է բանկում կենտրոնական բանկերից ստացված վարկերի և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Ենթաբաժին 310-ը ներառում է հետևյալ 1-ին կարգի հաշիվները՝ 3100 «Կենտրոնական բանկերից ցտացված վարկեր», 3101 «Կենտրոնական բանկերից ներգրավված ավանդներ»:

Հաշիվ 3100 «Կենտրոնական բանկերից ստացված վարկեր»

1-ին կարգի հաշիվ 3100-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն պասիվային են՝ կրեդիտում արտացոլվում են կենտրոնական բանկերից ստացված վարկերի և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների աճը, դեբետում՝ նվազումը:

31000 «Կենտրոնական բանկերից ստացված վարկեր» - հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերից ստացված վարկերի հաշվառման համար:

1) Հաշիվը կրեդիտագրվում է

ա) կենտրոնական բանկերից վարկ ստանալիս՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 31000

բ) վարկի ամորտիզացված արժեքով հաշվառման ժամանակ՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված գումարի չափով՝

ԴԿ - 70100

ԿԿ - 31000:

2) Հաշիվը դեբետագրվում է

ա) վարկի անվանական տոկոսադրույքի հիման վրա հաշվարկված վճարման ենթակա ծախսերի չափով՝

ԴԿ - 31000

ԿԿ - 31001

բ) ԴԿ - 31000 (կազմակերպության կողմից վարկի ստացման նպատակով կատարված վճարումներ (առկայության դեպքում) գումարի չափով)

ԿԿ - 19120 (ԴԿ. - 19120/ԿԿ. - Դրամական միջոցներ կատարված վճարումների գումարի չափով)

Այն դեպքում, երբ վարկատուի կողմից որոշում է կայացվում վարկ չտրամադրել, վարկի գծով կատարված ծախսերը (այն գումարները, որոնք կազմակերպությունը վճարում է վարկավորման հարցը դիտարկելու համար), որոնք մինչ այդ ճանաչվել էին որպես ապագա ժամանակաշրջանների ծախսեր և եկամուտներ ճանաչվում են ծախս և եկամուտ՝

ԴԿ - 71000

ԿԿ - 19120:

գ) վարկի մարման ժամանակ՝ կենտրոնական բանկերից ստացված վարկը մարելիս՝

ԴԿ - 31000

ԿԿ - Դրամական միջոցներ:

Վարկի տարեկան սպասարկման վճարը կատարելու պահին կատարվում է ծախսի ճշգրտում, սպասարկման վճարի չափով ձևափոխելով տոկոսային ծախսը ոչ տոկոսային՝

ԴԿ - 70100

ԿԿ - 71000

31001 «Կենտրոնական բանկերից ստացված վարկերի դիմաց հաշվեգրված տոկոսներ, տույժեր և տուգանքներ»

- հաշիվը նախատեսված է կենտրոնական բանկերից ստացված վարկերի դիմաց վճարվելիք տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է կենտրոնական բանկից ստացված վարկերի դիմաց հաշվեգրված, բայց դեռևս չվճարած տոկոսներ չափով՝

ԴԿ - 31000

ԿԿ - 31001

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 71001

ԿԿ - 31001

Հաշիվը դեբետագրվում է կենտրոնական բանկերից ստացված վարկերի դիմաց կուտակված տոկոսները վճարելիս՝

ԴԿ - 31001

ԿԿ - Դրամական միջոցներ:

Բաժին 31-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվներ 31000-ի և 31001-ի դեպքում, բացառությամբ օվերդրաֆտների և վարկային գծերին վերաբերվող հաշիվներից, որոնց հաշվառումը իրականացվում է գծային եղանակաով, եթե կազմակերպությունը չի կարող կանխատեսել այդ ակտիվների ապագա դրամական հոսքերը:

ԲԱԺԻՆ 32 «ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄ»

Բաժին 32-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝

320 «Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդներ»,

321 «Բանկի հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդներ»,

322 «Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ»,

323 «Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր և փոխառություններ»,

324 «Այլ պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների գծով»:

Ենթաբաժին 320 «Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդներ»

Ենթաբաժին 320-ը նախատեսված է բանկում ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ցպահանջ և ժամկետային ավանդների, ինչպես նաև դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների հաշվառման համար:

Հաշիվ 3200 «Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ցպահանջ ավանդներ»

1-ին կարգի հաշիվ 3200-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն պասիվային են՝ կրեդիտում արտացոլվում են ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ցպահանջ ավանդների և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների աճը, դեբետում՝ նվազումը:

32000 «Բանկերից ներգրավված ցպահանջ ավանդներ» - հաշիվը նախատեսված է բանկերից ներգրավված ցպահանջ ավանդների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է բանկերից ցպահանջ ավանդ ներգրավելիս՝

Դպ - Դրամական միջոցներ

Կտ - 32000

Հաշիվը դեբետագրվում է բանկերից ներգրավված ավանդը մարելիս՝

Դպ - 32000

Կտ - Դրամական միջոցներ:

32001 «Բանկերից ներգրավված ցպահանջ ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է բանկերից ներգրավված ցպահանջ ավանդների դիմաց վճարվելիք տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է բանկերից ներգրավված ցպահանջ ավանդների դիմաց տոկոսներ հաշվեգրելիս՝

Դպ - 70020

Կտ - 32001

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

Դպ - 71001

Կտ - 30001

Հաշիվը դեբետագրվում է բանկերից ներգրավված ցպահանջ ավանդների դիմաց տոկոսները վճարելիս՝

Դպ - 32001

Կտ - Դրամական միջոցներ:

Բաժին 32-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվներ 32000-ի և 32001-ի դեպքում, բացառությամբ ցպահանջ միջոցներից, որոնց գծով տոկոսների հաշվեգրումը՝ եթե կազմակերպությունը չի կարող կանխատեսել ապագա դրամական հոսքերի ժամանակացույց, իրականացվում է գծային մեթոդով:

ԲԱԺԻՆ 33 «ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԶՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ»

Բաժին 33-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 330 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ներգրավված ավանդներ», 331 «Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ներգրավված ավանդներ», 332 «Ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ստացված փոխառություններ», 333 «Կազմակերպության հետ կապված ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ստացված փոխառություններ», 334 «Մասնակիցներից ստացված ավանդներ», 335 «Մասնակիցներից ստացված փոխառություններ», 336 «Ներդրումային ծառայությունների մատուցման և ներդրումային ֆոնդերի կառավարման շրջանակներում հաճախորդներից/մասնակիցներից ստացված գումարներ», 337 «Ներդրումային ֆոնդերի կառավարման գծով կառավարիչներին վճարելիք պարզևավճարներ»:

Բաժին 33-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ բաժին 32-ում ընդգրկված հաշիվների դեպքում:

ԲԱԺԻՆ 34 «ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ»

Բաժին 34-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 340 «Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ», 341 «Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպությունների հետ», 342 «Ռեպո համաձայնագրեր ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց հետ»:

Ենթաբաժին 340 «Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ»

Ենթաբաժին 340-ը նախատեսված է կենտրոնական բանկերի հետ կնքված այն ռեպո համաձայնագրերի համար, որոնց շրջանակներում կազմակերպությունը տրամադրում է արժեթղթեր դրամական միջոցներ ներգրավելու նպատակով:

Հաշիվ 3400 «Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ»

1-ին կարգի հաշիվ 3400-ում ընդգրկված հաշիվների պասիվային են, դեբետագրվում են ռեպո պայմանագրերի կնքման, իսկ կրեդիտագրվում, դրանց ժամկետի ավարտի կամ վաղաժամկետ դադարեցման դեպքում:

34000 «Ռեպո համաձայնագրեր կենտրոնական բանկերի հետ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կենտրոնական բանկերի հետ կնքված ռեպո պայմանագրերի հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

ԴԿ - Դրամական միջոցներ

ԿԿ - 34000

Միաժամանակ կատարվում են հետևյալ թղթակցումները

Դտ - ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի համապատասխան հաշիվ

ԿԿ - արժեթղթերի համապատասխան հաշիվ

Այնուհետ՝ պայմանագրի ամորտիզացված արժեքով հաշվառման ժամանակ՝ արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ հաշվարկված եկամտի չափով՝

ԴԿ - 70400

ԿԿ - 34000:

Հաշիվը դեբետագրվում է՝

ա) ռեպո համաձայնագրի գծով տոկոսադրույքին համապատասխան վճարման ենթակա տոկոսի չափով՝

ԴԿ - 34000

ԿԿ - 34001

բ) ռեպո համաձայնագրի ավարտին՝

ԴԿ - 34000

ԿԿ - Դրամական միջոցներ:

34001 «Կենտրոնական բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց հաշվեգրված տոկոսներ, տույժեր և տուգանքներ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կենտրոնական բանկերի հետ կնքված ռեպո պայմանագրերի դիմաց հաշվեգրված տոկոսների, ինչպես նաև տույժերի և տուգանքների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

ԴԿ - 34000

ԿԿ - 34001

կամ տույժեր և տուգանքներ հաշվեգրելիս՝

ԴԿ - 71001

ԿԿ - 30001

Հաշիվը դեբետագրվում է տոկոսը մարելիս՝

ԴԿ - 34001

ԿԿ - Դրամական միջոցներ:

Բաժին 34-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն եղանակով, ինչ որ հաշիվներ 34000-ի և 34001-ի դեպքում:

ԲԱԺԻՆ 35 «ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ»

Բաժին 35-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 350 «Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով կենտրոնական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ», 351 «Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց նկատմամբ», 352 «Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների գծով», 353 «Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով կենտրոնական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ», 354 «Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի գծով ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց նկատմամբ», 355 «Պարտավորություններ փոխառությամբ ստացված արժեթղթերի համար հաշվեգրված եկամուտների»:

Բաժին 35-ի հաշիվները օգտագործվում են ռեպո համաձայնագրերի շրջանակներում ձեռք բերված արժեթղթերը վերավաճառելու դեպքում, ինչպես նաև համաձայնագրերի շրջանակներում ձեռք բերված արժեթղթերի դիմաց հաշվարկված և ստացված տոկոսների կամ նմանատիպ այլ եկամուտների առաջացման դեպքում, եթե դրանք անմիջապես չեն փոխանցվել պայմանագրի մյուս կողմին:

Ենթաբաժին 350 «Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով կենտրոնական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ»

Ենթաբաժին 350-ը նախատեսված է կենտրոնական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքի արդյունքում՝ արժեթուղթը ռեպո պայմանագրի շրջանակներում վաճառողի նկատմամբ, կազմակերպության մոտ ծագած պարտավորությունների հաշվառման համար: Նշված արժեթղթերը հաշվառվում են իրական արժեքով:

Հաշիվ 3500 «Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով կենտրոնական բանկերի նկատմամբ»

1-ին կարգի հաշիվ 3500-ում ընդգրկված հաշիվների պասիվային են, կրեդիտագրվում են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքի արդյունքում, իսկ, դեբետագրվում վերավաճառված արժեթղթերի վերադարձման դեպքում:

35000 «Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից կենտրոնական բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրերի շրջանակներում ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքի արդյունքում ձևավորված արժեթղթերի գծով պարտավորությունների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է՝

Դր - Դրամական միջոցներ

Կր - 35000

Ռեպո համաձայնագրով ձեռք բերված արժեթղթի գծով պարտավորությունները վերագնահատվում են իրական արժեքով՝ թղթակցելով համապատասխան եկամտային կամ ծախսային հաշիվների հետ:

Ենթաբաժիններ 350-ում, 351-ում, 353-ում և 354-ում ընդգրկված հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն եղանակով, ինչ որ հաշիվ 35000-ի դեպքում: Ենթաբաժիններ 352-ում և 355-ում ընդգրկված հաշիվների հաշվառման ժամանակ արժեթղթերից ստացվելիք եկամուտը թղթակցում է դրամական միջոցների հետ, եթե տվյալ եկամուտները փոխանցվելու են գործարքի հակառակ կողմին:

ԲԱԺԻՆ 36 «ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՃԱՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ»

Բաժին 36-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 360 «Հաշվարկային պարտավորություններ չեկերով և այլ վճարային փաստաթղթերով», 361 «Հաշվարկային պարտավորություններ ակրեդիտիվների գծով», 362 «Հաշվարկային պարտավորություններ ստեղծված ակրեդիտիվների գծով»:

Ենթաբաժին 360 «Հաշվարկային պարտավորություններ չեկերով և այլ վճարային փաստաթղթերով»

Ենթաբաժին 360-ը նախատեսված է բանկի կողմից ընդունված չեկերի և այլ վճարային փաստաթղթերի գծով հաճախորդի նկատմամբ պարտավորությունների (բացառությամբ՝ բյուջե փոխանցման ենթակա գումարների) հաշվառման համար:

Հաշիվ 3600 «Հաշվարկային պարտավորություններ չեկերով և այլ վճարային փաստաթղթերով»

36000 «Հաշվարկային պարտավորություններ չեկերով» - հաշիվը կրեդիտագրվում է չեկերի և այլ վճարային փաստաթղթերի վճարման հանձնարարագիր ստանալու դեպքում՝

Դր - Հաճախորդների բանկային հաշիվ կամ այլ հաշիվներ

Կր - 36000:

Հաշիվը դեբետագրվում է չեկերի և այլ վճարային փաստաթղթերի դիմաց վճարում կատարելիս՝

Դր - 36000

Կր - Դրամական միջոցներ:

36001 «Հաշվարկային պարտավորություններ այլ վճարային փաստաթղթերով» - հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 36000-ի դեպքում:

Ենթաբաժին 361 «Հաշվարկային պարտավորություններ ակրեդիտիվների գծով»

Հաշիվ 3610 «Հաշվարկային պարտավորություններ ֆինանսական կազմակերպություններին տրված ակրեդիտիվների գծով»

36100 «Հաշվարկային պարտավորություններ բանկերին տրված ակրեդիտիվների գծով» - հաշիվը նախատեսված է բանկի կողմից բանկերին տրված ակրեդիտիվների (հոժարագրերի) ակցեպտավորման հաշվառման

համար: Հոժարագրերն ակցեպտավորելով՝ բանկը պարտավորվում է բանկի կամ հաճախորդի համար վճարում կատարել երրորդ անձին (մատակարարին)՝

ԴԿ - 18000

ԿԿ - 36100

Հաշիվը դեբետագրվում է մատակարարին վճարում կատարելիս՝

ԴԿ - 36100

ԿԿ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 361-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 36100-ի դեպքում:

Ենթաբաժին 362 «Հաշվարկային պարտավորություններ սառեցված ակրեդիտիվների գծով»

Ենթաբաժին 362-ը նախատեսված է բանկի կողմից այն ակրեդիտիվների հաշվառման համար, որոնց գծով իրականացվել է գումարի սառեցում:

Հաշիվ 3620 «Հաշվարկային պարտավորություններ ֆինանսական կազմակերպություններին տրված սառեցված ակրեդիտիվների գծով»

36200 «Հաշվարկային պարտավորություններ բանկերին տրված սառեցված ակրեդիտիվների գծով» - հաշիվը նախատեսված է բանկի կողմից բանկերին տրված այն ակրեդիտիվների հաշվառման համար, որոնց գծով իրականացվել է գումարի սառեցում:

Հաշիվը կրեդիտագրվում է

ԴԿ - Հաճախորդի հաշիվ

ԿԿ - 36200

Հաշիվը դեբետագրվում է վճարում կատարելիս՝

ԴԿ - 36200

ԿԿ - Թղթակցային հաշիվ

ԲԱԺԻՆ 37 «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՀԵՋԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՊԱՀՎՈՂ ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Բաժին 37-ը ներառում է հետևյալ ենթաբաժիններից՝

370 «Կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր»,

371 «Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ»,

372 «Առևտրային նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ»,

373 «Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորություններ»,

374 «Հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ»:

Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» և ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտների սկզբունքներին համապատասխան:

Արժեթղթերի հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ 12 և 14 բաժիններում հաշվառվող արժեթղթերի դեպքում, այն է՝ ցպահանջ արժեթղթերի դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ անհնար է կանխատեսել ապագա դրամական հոսքերի ժամանակացույցը, եկամուտի հաշվառումը իրականացվում է զծային մեթոդով, մնացած դեպքերում՝ հաշվառումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ենթաբաժին 371 «Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ»

Ենթաբաժին 371-ում ընդգրկված հաշիվներն նախատեսված են շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ հաշվառման համար:

Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 32, ՀՀՄՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

Ենթաբաժին 372 «Առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ»

Ենթաբաժին 372-ում ընդգրկված հաշիվներն նախատեսված են առևտրական նպատակներով պահվող ածանցյալ գործիքների հաշվառման համար:

Հաշվեկշռում ածանցյալ գործարքը արտացոլվում է պայմանագրի ձեռքբերման օրվանից: Հաշվառումը տարվում է իրական արժեքով՝ վերագնահատման արդյունքն արտացոլելով եկամուտներում կամ ծախսերում:

Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 32, ՀՀՄՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

Ենթաբաժին 373 «Առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորություններ»

Ենթաբաժին 373-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են առևտրային նպատակներով պահվող այլ պարտավորությունների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 32, ՀՀՄՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

Ենթաբաժին 374 «Հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքներ»

Ենթաբաժին 374-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են հեջավորման նպատակներով պահվող ածանցյալ գործիքների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 32, ՀՀՄՍ 39 ստանդարտների և այլ կարգերի համաձայն:

ԲԱԺԻՆ 38 «ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐՆԵՐ»

Բաժին 38-ը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 380 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ», 381 «Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր», 382 «Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով վճարվելիք գումարներ», 383 «Արժեթղթերի պահառության գծով վճարվելիք գումարներ», 384 «Վճարման ենթակա շահաբաժիններ», 385 «Պարտավորություններ ավանդների ապահովագրության գծով», 386 «Պարտավորություններ ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով», 387 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ»:

Ենթաբաժին 380 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»

Ենթաբաժին 380-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են այլ անձանց ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար: Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի համաձայն:

Հաշիվ 3800 «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»

38000 «Բանկերին ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» - հաշիվը նախատեսված է բանկերին ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հիմնական միջոցները ֆինանսական վարձակալության վերցնելու դեպքում՝

ԴԿ - 21006

ԿԿ - 3800 համապատասխան հաշիվ

ԴԿ - 3810 համապատասխան հաշիվ:

Հաշիվը դեբետագրվում է վարձավճարները վճարելիս՝

ԴԿ - 3800

ԿԿ - Դրամական միջոցներ

Ենթաբաժին 381 «Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր»

Ենթաբաժին 381-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են ֆինանսական վարձակալությամբ վերցված ակտիվի դիմաց վարձավճարների վճարման գծով պարտավորության և իրական արժեքի տարբերությունների հաշվառման համար: Այս ենթաբաժնի հաշիվները ակտիվային են, կարգավորող և ունեն դեբետային մնացորդ:

Հաշվառումը տարվում է ՀՀՄՍ 17-ի համաձայն:

Հաշիվ 3810 «Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր»

38100 «Ֆինանսական վարձակալության դիմաց չկրած ֆինանսական ծախսեր բանկերի գծով» - հաշիվը նախատեսված է բանկերից ֆինանսական վարձակալությամբ վերցված ակտիվի դիմաց վարձավճարների վճարման գծով պարտավորության և իրական արժեքի տարբերությունների հաշվառման համար:

Հաշիվը դեբետագրվում է ակտիվը ֆինանսական վարձակալության վերցնելու ժամանակ՝

ԴԿ - ակտիվի համապատասխան հաշիվ

ԴԿ - 38100

ԿԿ - 38000:

Հաշիվը կրեդիտագրվում է չկրած ֆինանսական ծախսերը ծախսերին պարբերաբար հաշվեգրելու ժամանակ՝
ԴԿ - 70800

ԿԿ - 38100:

Ենթաբաժին 381-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 38100-ի դեպքում:

Ենթաբաժին 382 «Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով վճարվելիք գումարներ»

Ենթաբաժին 382-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են արժեթղթի փաթեթի կառավարման համար այլ անձանց վճարվող գումարների հաշվառման համար:

Հաշիվ 3820 «Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով այլ անձանց վճարվելիք գումարներ»

38200 «Բանկերին արժեթղթերի փաթեթի կառավարման գծով վճարվելիք գումարներ» - հաշիվները նախատեսված են արժեթղթի փաթեթի կառավարման համար բանկերին վճարվող գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով բանկերին վճարվելիք գումարները հաշվեգրելիս՝

ԴԿ - 71006

ԿԿ - 38200

Հաշիվը դեբետագրվում է հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարում կատարելիս՝

ԴԿ - 38200

ԿԿ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 382-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 38200-ի դեպքում:

Ենթաբաժին 383 «Արժեթղթերի պահառության գծով վճարվելիք գումարներ»

Ենթաբաժին 382-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են արժեթղթի փաթեթի կառավարման համար այլ անձանց վճարվող գումարների հաշվառման համար:

Հաշիվ 3830 «Արժեթղթերի փաթեթի կառավարման գծով այլ անձանց վճարվելիք գումարներ»

38300 «Բանկերին արժեթղթերի փաթեթի կառավարման գծով վճարվելիք գումարներ» - հաշիվները նախատեսված են արժեթղթի փաթեթի կառավարման համար բանկերին վճարվող գումարների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է արժեթղթի փաթեթի կառավարման գծով բանկերին վճարվելիք գումարները հաշվեգրելիս՝

ԴԿ - 71007

ԿԿ - 38300

Հաշիվը դեբետագրվում է արժեթղթի փաթեթի կառավարման գծով վճարում կատարելիս՝

ԴԿ - 38300

ԿԿ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 383-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 38300-ի դեպքում:

Ենթաբաժին 384 «Վճարման ենթակա շահաբաժիններ»

Հաշիվ 3840 «Վճարման ենթակա շահաբաժիններ»

Ենթաբաժին 384-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ և հասարակ բաժնետոմսերի դիմաց վճարվելիք շահաբաժինների հաշվառման համար:

38400 «Վճարման ենթակա շահաբաժիններ բանկերին» - հաշիվը նախատեսված է բանկերին կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ և հասարակ բաժնետոմսերի դիմաց վճարվելիք շահաբաժինների հաշվառման համար:

Շահաբաժիններ հայտարարելիս բանկը ձևակերպում է՝

ԴԿ - 5200 համապատասխան հաշիվ

ԿԿ - 38400

Շահաբաժինները վճարելիս՝

Դպ - 38400

Կտ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 384-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 38400-ի դեպքում:

Ենթաբաժին 385 «Պարտավորություններ ավանդների ապահովագրության գծով»

Ենթաբաժին 385-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են ավանդների ապահովագրության գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված գումարների հաշվառման համար:

Հաշիվ 3850 «Պարտավորություններ ավանդների ապահովագրության գծով»

38500 «Պարտավորություններ ավանդների ապահովագրության գծով» - այս հաշիվը նախատեսված է ավանդների ապահովագրության գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված գումարների հաշվառման համար: Հաշվեգրում կատարելիս ձևակերպվում է՝

Դպ - 70200

Կտ - 38500

Վճարում կատարելիս ձևակերպվում է՝

Դպ - 38500

Կտ - Դրամական միջոցներ:

Հաշիվ 3851 «Պարտավորություններ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով»

38510 «Պարտավորություններ ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով» - այս հաշիվը նախատեսված է ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված գումարների հաշվառման համար: Հաշվեգրում կատարելիս ձևակերպվում է՝

Դպ - 71124

Կտ - 38510

Վճարում կատարելիս ձևակերպվում է՝

Դպ - 38510

Կտ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 386 «Պարտավորություններ ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով»

Ենթաբաժին 386-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են ֆինանսական հաշտարարի գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված գումարների հաշվառման համար:

Հաշիվ 3860 «Պարտավորություններ ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով»

38600 «Պարտավորություններ ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով» - այս հաշիվը նախատեսված է ֆինանսական հաշտարարի գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված գումարների հաշվառման համար: Հաշվեգրում կատարելիս ձևակերպվում է՝

Դպ - 71300

Կտ - 38600

Վճարում կատարելիս ձևակերպվում է՝

Դպ - 38600

Կտ - Դրամական միջոցներ:

Ենթաբաժին 387 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ»

Ենթաբաժին 387-ում ընդգրկված հաշիվը նախատեսված է հաճախորդներից կամ այլ աղբյուրներից ստացված վճարումների հաշվառման համար, որոնք կատարվել են կազմակերպության կողմից մատուցվելիք ծառայությունների դիմաց, սակայն վերաբերում են ապագա ժամանակաշրջանին:

Հաշիվ 3870 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ»

38700 «Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ» - այս հաշիվը ներկայացնում է հաճախորդներից կամ այլ աղբյուրներից ստացված վճարումները՝ կազմակերպության կողմից մատուցվելիք ծառայությունների դիմաց, որոնք վերաբերում են ապագա ժամանակաշրջանին: Ծառայությունները մատուցելուց, իսկ վարկերի դեպքում՝ պայմանագրով

նախատեսված ժամկետը լրանալուց հետո և/կամ դրան զուգահեռ, այս հաշվի գումարները փոխանցվում են 60 կարգի համապատասխան հաշիվներին: Այս հաշվում հաշվառվում են նաև տրամադրված վարկերի դիմաց պայմանագրով սահմանված ժամկետից շուտ վճարվող (կանխավճարվող) տոկոսագումարները:

Հաշիվը կրեդիտագրվում է ապագա ժամանակաշրջանի եկամուտների չափով՝

Դպ - Դրամական միջոցներ

Կտ - 38700:

Հաշիվը դեբետագրվում է ապագա ժամանակաշրջանում ճանաչված եկամտի չափով՝

Դպ - 38700

Կտ - Համապատասխան եկամտային հաշիվներ:

ԲԱԺԻՆ 39 «ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ»

Բաժին 39-ը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ 390 «Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև», 391 «Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով», 392 «Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր», 393 «Տարանցիկ հաշիվներ»

Ենթաբաժին 390 «Հաշվարկներ կազմակերպության և իր մասնաճյուղերի միջև»

Ենթաբաժին 390-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են այն գումարների հաշվառման համար, որոնք առաջանում են բանկի և մասնաճյուղերի միջև փոխադարձ հաշվարկների արդյունքում: Հաշվետվություն ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ այս հաշիվը ենթակա է գրոյացման, մնացորդները դասակարգվում են համապատասխան հաշիվներին: Եթե դա անհնար է, ապա անհրաժեշտ է առաջացած մնացորդը գրանցել 19314 կամ 43008 հաշիվների վրա: Հաջորդ օրը մնացորդը վերականգնվում է այս հաշվին:

Ենթաբաժին 391 «Կրեդիտորական պարտքեր բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով»

Ենթաբաժին 391-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով կրեդիտորական պարտքերի հաշվառման համար:

Հաշիվ 3910 «Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով»

39100 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով» - այս հաշիվը նախատեսված է հաշվարկված շահութահարկի գծով բանկի պարտավորությունների հաշվառման համար:

Հաշիվը կրեդիտագրվում է հաշվարկված շահութահարկի գումարի չափով՝

Դպ - 74400

Կտ - 39100

Հաշիվը դեբետագրվում է շահութահարկի գծով պարտավորությունները դուրս գրելիս՝ թղթակցելով 20110 «Կանխավճարներ շահութահարկի գծով» հաշվի հետ՝

Դպ - 39100 «Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով»

Կտ - 19110 «Կանխավճարներ շահութահարկի գծով»:

Ենթաբաժին 391-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 39100-ի դեպքում:

Ենթաբաժին 392 «Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր»

Ենթաբաժին 392-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 39100-ի դեպքում:

Հաշիվ 3923 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական հիմնադրամի համալրման գծով»

39230 «Կրեդիտորական պարտքեր կանոնադրական հիմնադրամի համալրման գծով» - հաշիվը նախատեսված է նոր ստեղծվող կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի ձևավորման և գործող կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով՝ մինչև ՀՀ ԿԲ կողմից սահմանված կարգով կանոնադրական հիմնադրամի գրանցումը, որից հետո այս հաշիվը փակվում է, իսկ դրանում հաշվառված միջոցներն օգտագործվում են բանկի հայեցողությամբ:

Հաշիվը դեբետագրվում է կանոնադրական հիմնադրամի ձևավորման և համալրման դեպքում՝

Դպ - Դրամական միջոցներ

Կանոնադրական հիմնադրամի ձևավորումից կամ համալրումից հետո այս հաշիվը փակվում է:

Ենթաբաժին 393 «Տարանցիկ հաշիվներ»

Ենթաբաժին 393-ում ընդգրկված մնացած հաշիվը նախատեսված է այն չպարզաբանված պարտավորությունների և տարանցիկ բնույթի այլ գործարքների հաշվառման համար, որոնք դեռևս չեն վերագրվել հաշվետերերի համապատասխան հաշիվներին: Հինգ բանկային օրվա ընթացքում չպարզաբանված գումարը պետք է դուրս գրվի այս հաշվից և վերադարձվի այն ուղարկողի հաշվին:

ԲԱԺԻՆ 40 «ՀԵՏԱԶԳՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Բաժին 40-ում ընդգրկված մնացած հաշիվը նախատեսված է հարկվող ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած շահութահարկի գծով հետաձգված հարկային պարտավորությունների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար:

Հետաձգված հարկային պարտավորությունների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 41 «ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ»

Բաժին 41-ում ընդգրկված մնացած հաշիվը նախատեսված է ակտիվներին վերաբերող շնորհների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ակտիվներին վերաբերող շնորհների հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 20 ստանդարտում:

ԲԱԺԻՆ 42 «ՊԱՀՈՒՍՆԵՐ»

Բաժին 42-ում ընդգրկված մնացած հաշիվը նախատեսված է որպես պարտավորություն ճանաչվող պահուստների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Պահուստներ ձևավորվում են բանկային երաշխիքների և այլ պարտավորությունների գծով: Պահուստների հաշվառման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 43 «ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Բաժին 43-ում ընդգրկված մնացած հաշիվը նախատեսված է այն պարտավորությունների ու դրանց գծով հաշվեգրված տոկոսների հաշվառման համար, որոնց համար առանձին հաշիվներ նախատեսված չեն:

ԿԱՐԳ 5 ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

ԲԱԺԻՆ 50 «ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»

Բաժին 50-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 500 «Բաժնետոմսեր», 501 «Բաժնեմասեր և փայամասնակցություններ»:

Ենթաբաժին 500 «Բաժնետոմսեր»

Հաշիվ 5000 «Սովորական բաժնետոմսեր»

50000 «Սովորական բաժնետոմսեր-անվանական արժեք» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից թողարկված սովորական բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է սովորական բաժնետոմսերի (այդ թվում նաև՝ լրացուցիչ) թողարկման դեպքում:

50001 «Սովորական բաժնետոմսեր-էմիսիոն եկամուտ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը:

50002 «Սովորական բաժնետոմսեր-զեղչ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից սովորական բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած բացասական տարբերությունը:

Հաշիվ 5001 «Արտոնյալ բաժնետոմսեր»

50010 «Արտոնյալ բաժնետոմսեր-անվանական արժեք» - հաշիվը նախատեսված է բանկի կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսերի հաշվառման համար: Հաշվառումը տարվում է բաժնետոմսերի անվանական արժեքով: Հաշիվը կրեդիտագրվում է արտոնյալ բաժնետոմսերի (այդ թվում՝ նաև լրացուցիչ) թողարկման դեպքում:

50011 «Արտոնյալ բաժնետոմսեր-էմիսիոն եկամուտ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած դրական տարբերությունը:

50012 «Արտոնյալ բաժնետոմսեր-զեղչ» - այս հաշվում հաշվառվում է ներդրողների կողմից արտոնյալ բաժնետոմսերի ձեռքբերման համար վճարված գնի և անվանական արժեքի միջև եղած բացասական տարբերությունը:

Ենթաբաժին 501 «Բաժնեմասեր և փայամասնակցություններ»

Հաշիվ 5010 «Բաժնեմասեր և փայամասնակցություններ»

50100 «Բաժնեմասեր» - հաշիվը նախատեսված է ՍՊԸ հանդիսացող կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի միջոցների հաշվառման համար:

50101 «Փայամասնակցություններ» - հաշիվը նախատեսված է կոոպերատիվ հանդիսացող կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամի միջոցների հաշվառման համար:

ԲԱԺԻՆ 51 «ՀԵՏ ԳՆՎԱԾ ԵՎ ԶՎՃԱՐՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ»

Բաժին 51-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 510 «Հետ գնված կապիտալ», 511 «Զվճարված կապիտալ»:

Բաժին 51-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են կազմակերպության կողմից հետ գնված կամ ձեռք բերված բաժնային արժեթղթերի ընդհանրացման համար: Հաշիվներն ակտիվային են, կարգավորող:

Հաշվի դեբետում արտացոլվում են բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկված, բայց չտեղաբաշխված, կազմակերպության կողմից հետ գնված կամ ձեռք բերված բաժնետոմսերի անվանական արժեքը, ինչպես նաև մասնակիցների (հիմնադիրների) պարտքը բանկի կապիտալում ներդրումների գծով, իսկ կրեդիտում՝ բաժնետոմսերի տեղաբաշխումը, հետ գնված կամ ձեռքբերված, թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի մարումը կամ տեղաբաշխումը, տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց պարտքի մարումը կամ չմարված պարտքերի հաշվին կապիտալի նվազեցումը:

ԲԱԺԻՆ 52 «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ՀԱՄՈՒՏ»

Բաժին 52-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 520 «Զբաղիված շահույթ», 521 «Այլ համապարփակ եկամուտ»:

Բաժին 52-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են կազմակերպության հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտի հաշվառման:

Ենթաբաժին 520 «Զբաղիված շահույթ»

Հաշիվ 5200 «Զբաղիված շահույթ»

52000 «Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ կամ վնաս» - հաշիվը նախատեսված է կազմակերպության ընթացիկ տարվա գործունեության ֆինանսական արդյունքի (շահույթի կամ վնասի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Յուրաքանչյուր նոր ֆինանսական տարվա սկզբին այս հաշվի մնացորդը (նախորդ տարվա զուտ շահույթ/զուտ վնասը) տեղափոխվում է 52001 «Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ կամ վնաս» հաշվին:

52001 «Նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ կամ վնաս» - այս հաշիվը նախատեսված է նախորդ ֆինանսական տարիների չբաշխված շահույթի (չծածկված վնասի) վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հաշվի կրեդիտում արտացոլվում է նախորդ տարվա զուտ շահույթը, նախորդ տարիների վնասների ծածկումը գլխավոր պահուստի հաշվին, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի չբաշխված շահույթին վերագրումը, իսկ դեբետում՝ չբաշխված շահույթի օգտագործումը, նախորդ տարվա զուտ վնասը:

Ենթաբաժին 521 «Այլ համապարփակ եկամուտ»

Հաշիվ 5210 «Այլ համապարփակ եկամուտ»

52100 «Շենքերի և շինությունների վերագնահատման պահուստ» - հաշիվը նախատեսված է շենքերի և շինությունների վերագնահատումից առաջացած տարբերությունների ամփոփման համար, սկզբնական արժեքը գերազանցող գումարի սահմաններում:

Հաշիվը դերետագրվում է՝

Դպ - 52100

Կպ - 77001

Հաշիվը կրեդիտագրվում է՝

Դպ - 66001

Կպ - 52100

Հաշիվ 5210-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվ 52100-ի դեպքում:

ԲԱԺԻՆ 53 «ԳԼԽԱՎՈՐ ՊԱՀՈՒՍ»

Բաժին 53-ում ընդգրկված հաշիվը նախատեսված է այն պահուստների համար, որոնք ստեղծվում են կազմակերպության տրամադրության տակ մնացած շահույթից: Պահուստն օգտագործվում է համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգերի:

ԲԱԺԻՆ 54 «ԿԱՊԻՏԱԼԻ ԱՅԼ ՀՈԴՎԱԾՆԵՐ»

Բաժին 54-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են սեփական կապիտալի այն հոդվածների հաշվառման համար, որոնց համար հատուկ հոդվածներ առանձնացված չեն:

ԿԱՐԳ 6 ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԲԱԺԻՆ 60 «ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ»

Բաժին 60-ը նախատեսված է կազմակերպության կողմից իրականացված տարբեր գործառնություններից ստացված տոկոսային եկամտի հաշվառման համար: Բաժին 60-ը ներառված են հետևյալ ենթաբաժինները՝

600 «Տոկոսային եկամուտներ թղթակցային հաշիվներից և ներդրված ավանդներից»,

601 «Տոկոսային եկամուտներ տրված վարկերից և փոխառություններից»,

602 «Տոկոսային եկամուտներ ռեպո համաձայնագրերից»,

603 «Տոկոսային եկամուտներ ակրեդիտիվներից»,

604 «Տոկոսային եկամուտներ շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերից»,

605 «Տոկոսային եկամուտներ վաճառքի համար մատչելի արժեթղթերից»,

606 «Տոկոսային եկամուտներ մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերից»,

607 «Տոկոսային եկամուտներ ֆինանսական վարձակալությունից»,

608 «Այլ տոկոսային եկամուտներ»:

ԲԱԺԻՆ 61 «ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ»

Բաժին 61-ը նախատեսված է կազմակերպության կողմից իրականացված տարբեր գործառնություններից ստացված ոչ տոկոսային եկամտի հաշվառման համար: Բաժին 61-ը ներառված են հետևյալ ենթաբաժինները՝

610 «Բաժնեմասնակցություններից և փայամասնակցություններից ստացվող եկամուտներ»,

611 «Եկամուտներ ֆակտորինգային գործառնությունների գծով»,

612 «Երաշխիքների և երաշխավորությունների գծով ստացվելիք գումարներ»,

613 «Եկամուտներ արժեթղթերի փաթեթի կառավարման գծով»,

614 «Եկամուտներ արժեթղթերով գործարքների գծով»,

615 «Եկամուտներ խորհրդատվական ծառայությունների գծով»,

616 «Եկամուտներ արժեթղթերի տեղաբաշխումից»,

617 «Եկամուտներ պահառության գործունեությունից»,

618 «Եկամուտներ այլ ներդրումային ծառայություններից»:

Եկամուտ ճանաչելիս այս հաշիվները կրեդիտագրվում են՝ թղթակցելով ստացվելիք տոկոսների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 62 «ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐ»

Բաժին 62-ը նախատեսված է կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստացված միջնորդավճարների հաշվառման համար:

Բաժին 62-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝

620 «Միջնորդավճարներ պլաստիկ քարտերի սպասարկումից»,

621 «Այլ միջնորդավճարներ»,

622 «Եկամուտներ պետական և տեղական ինքնակառավարման բյուջեների սպասարկման և այլ ծառայությունների մատուցման գծով»: Եկամուտ ճանաչելիս այս հաշիվները կրեդիտագրվում են՝ թղթակցելով ստացվելիք տոկոսների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 63 «ԿՈՐՈՒՍՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՑ (ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ»

Բաժին 63-ը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններում կրած կորուստների վերականգնման արդյունքում առաջացած եկամուտների հաշվառման համար:

Բաժին 63-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝

630 «Վարկերի գծով կորուստների վերականգնումից (փոխհատուցումից) եկամուտներ»,

631 «Կորուստների վերականգնումից եկամուտներ դեբիտորական պարտքերի և այլ հոդվածների գծով»,

632 «Ապահովագրության գծով փոխհատուցում»,

ԲԱԺԻՆ 64 «ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ»

Բաժին 64-ը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած նախորդ տարիների եկամուտների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե բանկը ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 8 ստանդարտում:

ԲԱԺԻՆ 65 «ՆԵՐՔԱՆԿԱՅԻՆ (ՄԻՋՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐ»

Բաժին 65-ը նախատեսված է ներբանկային գործառնությունների արդյունքում առաջացած եկամուտների և ծախսերի հաշվառման համար: Մասնաճյուղերի հաշվեկշիռները միավորելիս հաշիվը գրոյացվում է:

ԲԱԺԻՆ 66 «ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ»

Բաժին 66-ը նախատեսված է կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների դիմաց ստացված միջնորդավճարների հաշվառման համար: Բաժին 66-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝

660 «Ձեռքբերումներից և/կամ օտարումներից ստացված օգուտներ»,

661 «Վերագնահատումներից/վերաչափումներից ստացված օգուտներ»,

662 «Արժեզրկման հակադարձումից ստացված օգուտներ»,

663 «Այլ եկամուտներ»: Եկամուտ ճանաչելիս այս հաշիվները կրեդիտագրվում են՝ թղթակցելով ստացվելիք եկամուտների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 67 «ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ»

Բաժին 67-ը նախատեսված է կազմակերպության մոտ առաջացած համապարփակ եկամուտների հաշվառման համար:

Բաժին 67-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 670 «Վերագնահատումներից/վերաչափումներից համապարփակ եկամուտներ»: Եկամուտ ճանաչելիս այս հաշիվները կրեդիտագրվում են՝ թղթակցելով ստացվելիք եկամուտների հաշիվների հետ:

ԿԱՐԳ 7 ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԾԱԽՍԵՐ

ԲԱԺԻՆ 70 «ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ»

Բաժին 70-ը նախատեսված է կազմակերպության կողմից իրականացված տարբեր գործառնություններից կրած տոկոսային ծախսերի հաշվառման համար:

Բաժին 70-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 700 «Տոկոսային ծախսեր ֆինանսական կազմակերպությունների թղթակցային հաշիվների և ներգրավված ավանդների դիմաց», 701 «Տոկոսային ծախսեր ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկերի և փոխառությունների դիմաց», 702 «Տոկոսային ծախսեր ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանց բանկային հաշիվների և ներգրավված ավանդների դիմաց», 703 «Տոկոսային ծախսեր ֆինանսական կազմակերպություն չհանդիսացող անձանցից ներգրավված փոխառությունների դիմաց», 704 «Տոկոսային ծախսեր ռեպո համաձայնագրերի դիմաց», 705 «Տոկոսային ծախսեր կազմակերպության կողմից թողարկված արժեթղթերի դիմաց», 706 «Տոկոսային ծախսեր կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ապահովության հիմնադրամի գծով», 707 «Այլ տոկոսային ծախսեր»: Ծախս ճանաչելիս այս հաշիվները դեբետագրվում են՝ թղթակցելով հաշվեգրված տոկոսների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 71 «ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ»

Բաժին 71-ը նախատեսված է կազմակերպության մատուցված ծառայությունների դիմաց տրված միջնորդավճարների և նմանատիպ այլ ծախսերի, ինչպես նաև ապահովագրության գծով փոխհատուցումների հաշվառման համար:

Բաժին 71-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 710 «Միջնորդավճարներ, տույժեր ու տուգանքներ և այլ գործառնական ծախսեր», 711 «Վարչական ծախսեր», 712 «Ապահովագրության գծով ծախսեր», 713 «Ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով ծախսեր»: Ծախս ճանաչելիս այս հաշիվները դեբետագրվում են՝ թղթակցելով հաշվեգրված տոկոսների հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 72 «ԿՈՐՈՒՍՆԵՐ»

Բաժին 72-ը նախատեսված է կազմակերպության կողմից իրականացված տարբեր գործառնություններից կրած կորուստների հաշվառման համար:

Բաժին 72-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 720 «Ձեռքբերումներից և/կամ օտարումներից (վաճառքից) առաջացած կորուստներ», 721 «Վերագնահատումներից/ վերաչափումներից առաջացած կորուստներ», 722 «Արժեզրկումից առաջացած կորուստներ»: Ծախս ճանաչելիս այս հաշիվները դեբետագրվում են՝ թղթակցելով հաշվեգրված ծախսերի հաշիվների հետ:

ԲԱԺԻՆ 73 «ՀԱՏԿԱԳՈՒՄՆԵՐ ՊԱՀՈՒՍՆԵՐԻՆ»

Բաժին 73-ը նախատեսված է վարկերի ու դեբիտորական պարտքերի ընդհանուր ու հատուկ պահուստներին, բանկային երաշխիքների և այլ պարտավորությունների պահուստներին, ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին կատարվող հատկացումների, ինչպես նաև չաշխատող ակտիվների՝ նախորդ ժամանակաշրջանում հաշվեգրված տոկոսների գծով կատարված ծախսերի գումարների հաշվառման համար:

Բաժին 73-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 730 «Հատկացումներ վարկերի ու դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստներին»:

ԲԱԺԻՆ 74 «ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ (ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ)»

Բաժին 74-ը նախատեսված է շահութահարկի գծով ընթացիկ և հետաձգված ծախսերի (փոխհատուցումները) հաշվառման համար: Շահութահարկի հաշվառումը նկարագրված է ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտում:

ԲԱԺԻՆ 75 «ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ»

Բաժին 75-ը նախատեսված է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող գործառնությունների գծով հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքում առաջացած նախորդ տարիների ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար (եթե բանկը ընտրել է այնպիսի քաղաքականություն, ըստ որի՝ էական սխալների ուղղումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների արդյունքները ներառվում են հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքներում): Նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական արդյունքների ճշգրտման մոտեցումները նկարագրված են ՀՀՄՍ 8-ում:

ԲԱԺԻՆ 76 «ՆԵՐՔԱՆԿԱՅԻՆ (ՄԻՋՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ) ԾԱԽՍԵՐ»

Բաժին 76-ը նախատեսված է ներբանկային գործառնությունների արդյունքում առաջացած ծախսերի հաշվառման համար: Մասնաճյուղերի հաշվեկշիռները միավորելիս հաշիվը գրոյացվում է:

ԲԱԺԻՆ 77 «ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ»

Բաժին 77-ը նախատեսված է կազմակերպության մոտ առաջացած համապարփակ կորուստների հաշվառման համար:

Բաժին 77-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 770 «Վերագնահատումներից/ վերաչափումներից համապարփակ կորուստներ»:

ԲԱԺԻՆ 78 «ԱՅԼ ԾԱԽՍԵՐ/ԿՈՐՈՒՍՏՆԵՐ»

Բաժին 78-ը նախատեսված է կազմակերպության մոտ այլ գործառնություններից առաջացած ծախսերի/կորուստների հաշվառման համար:

Բաժին 78-ում ներառված է հետևյալ ենթաբաժինը՝ 780 «Այլ ծախսեր/կորուստներ»:

ԿԱՐԳ 8 ՀԵՏՀԱՇՎԵԿՇՈՒԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

ԲԱԺԻՆ 80 «ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎՃԱՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԳԾՈՎ»

Բաժին 80-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 800 «Վարկային գծեր, քարտեր և օվերդրաֆտներ», 801 «Ակրեդիտիվներ և վճարման փաստաթղթեր», 802 «Ածանցյալ գործիքներ»:

Ենթաբաժին 800 «Վարկային գծեր, քարտեր և օվերդրաֆտներ»

Ենթաբաժին 800-ը նախատեսված է վարկային գծերի, քարտերի և օվերդրաֆտների առավելագույն սահմանաչափերի և չօգտագործված մասերի հաշվառման համար: Այս գործիքներից յուրաքանչյուրի գծով միջոցների օգտագործման դեպքում նվազեցվում են չօգտագործված մասերի հաշվառման հաշիվները:

Ենթաբաժին 801 «Ակրեդիտիվներ և վճարման փաստաթղթեր»

Ենթաբաժին 801-ը նախատեսված է ակրեդիտիվների, վճարային հանձնարարականների և այլ վճարային փաստաթղթերի գծով պայմանական պարտավորությունների հաշվառման համար:

Ենթաբաժին 802 «Ածանցյալ գործիքներ»

Ենթաբաժին 802-ը նախատեսված է արժույթային, արժեթղթերի և այլ ածանցյալ գործիքների պայմանագրային արժեքի հաշվառման համար: Արժույթային ածանցյալների դեպքում արտարժույթային միջոցների գրանցումը կատարվում է գործարքի կնքման օրը ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով:

ԲԱԺԻՆ 81 «ԳՐԱՎ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Բաժին 81-ում ներառված են հետևյալ ենթաբաժինները՝ 810 «Գրավ», 811 «Երաշխիքներ», 812 «Երաշխավորություններ», 813 «Պայմանական ակտիվներ և պարտավորություններ»:

Ենթաբաժին 810 «Գրավ»

Ենթաբաժին 810-ում հաշվառվում են ինչպես վարկերի և այլ փոխատվությունների դիմաց ստացված, այնպես էլ կազմակերպության կողմից այլ անձանց տրամադրված միջոցները: Ստացված գրավի դեպքում, գրավի առարկաներն ենթաբաժնի հաշիվներից դուրս են գրվում գրավատուին գրավի հետ վերադարձման կամ գրավի իրացման ժամանակ: Տրամադրված գրավի դեպքում՝ գրավի հետ վերադարձման կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքի կորստի ժամանակ

Ենթաբաժին 811 «Երաշխիքներ»

Ենթաբաժին 811-ում հաշվառում են վարկերի և այլ փոխատվությունների դիմաց ստացված, ինչպես նաև այլ անձանց տրված երաշխիքները: Ստացված երաշխիքների հաշվառվող գումարները դուրս են գրվում երաշխիքներով տրված

վարկերի և այլ փոխատվությունների մարման կամ դրանց դիմաց վճարում ստանալիս: Տրամադրված երաշխիքների դեպքում՝ ժամկետի մարման կամ երաշխիքի դիմաց վճարում կատարելու օրը:

Ենթաբաժին 812 «Երաշխավորություններ»

Ենթաբաժին 812-ում հաշվառում են վարկերի և այլ փոխատվությունների դիմաց ստացված, ինչպես նաև այլ անձանց տրված երաշխավորությունները: Ստացված երաշխավորությունների հաշվառվող գումարները դուրս են գրվում երաշխավորությամբ տրված վարկերի և այլ փոխատվությունների մարման կամ դրանց դիմաց վճարում ստանալիս: Տրամադրված երաշխիքների և երաշխավորությունների դեպքում՝ ժամկետի մարման կամ երաշխավորության դիմաց վճարում կատարելու օրը:

Ենթաբաժին 813 «Այլ պայմանական ակտիվներ և պարտավորություններ»

Ենթաբաժին 813-ը նախատեսված է պայմանական ակտիվների և պարտավորությունների հաշվառման համար:

ԲԱԺԻՆ 82 «ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԺԵՂՅԵՐ»

Բաժին 82-ը ներառում է հետևյալ ենթաբաժինները՝ 820 «Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր», 821 «Փոխառությամբ ստացված արժեթղթեր»:

Սույն բաժնի հաշիվներում ռեպո համաձայնագրերի շրջանակներում ձեռք բերված արժեթղթերը հաշվառվում են այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն վերափառվել կազմակերպության կողմից երրորդ անձին կամ մինչև ռեպո համաձայնագրի ժամկետի ավարտը: Հաշվառումն իրականացվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն:

ԲԱԺԻՆ 83 «ԱՐԺԵՂՅԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Բաժին 83-ը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

830 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթեր»,

831 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող այլ ակտիվներ»,

832 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ակտիվների գծով պարտավորություններ հիմնադիրների (հաճախորդների) նկատմամբ»,

833 «Արժեթղթերի փաթեթի կառավարման ներքո առաջացած պարտավորություններ»,

834 «Եկամուտներ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ֆինանսական ակտիվներից»,

835 «Վնասներ արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ֆինանսական ակտիվներից»,

836 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք արժեթղթերի փաթեթի կառավարման շրջանակներում»:

Այն բոլոր դեպքերում, երբ կազմակերպության կողմից ներդրումային ծառայության համար ստացվելիք եկամտի չափը որոշվում է կախված հաճախորդի ակտիվների արժեքից, կազմակերպությունը պետք է վերագնահատի հաճախորդի ակտիվներն առնվազն ներդրումային ծառայության դիմաց եկամուտը հաշվեգրելու օրը:

Արժեթղթերի վերաչափումը պետք է կատարվի համաձայն ՀՀՄՍ 39-ի, արտարժույթի վերագնահատումը համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքը: Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի ներքո ստացված ակտիվները պետք է արտացոլվեն ընթացիկ (վերականգնման) արժեքով, այսինքն՝ դրամական միջոցների այն գումարի չափով, որը կվճարվեր, եթե ներկա պահին միևնույն կամ համանման ակտիվ ձեռք բերվեր, իսկ ծառայության մատուցման ընթացքում ձեռքբերված ակտիվները պետք է արտացոլվեն սկզբնական (փաստացի) արժեքով, այսինքն՝ ձեռքբերման պահի դրությամբ դրանց ձեռքբերման համար վճարված կամ վճարվելիք դրամական միջոցների գումարով, այլ ձևով հատուցելու դեպքում հատուցման իրական արժեքի չափով:

Արտարժույթով արտահայտված ակտիվները վերագնահատվում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված ֆինանսական շուկայում ձևավորված փոխարժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 21-ի:

Ենթաբաժին 830 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթեր»

Ենթաբաժին 830-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են բանկի կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի համաձայն իրենց հաճախորդներից կառավարման նպատակով վերցված, ինչպես նաև գործունեության ընթացքում ձեռք բերված և գործարքների առարկա հանդիսացող արժեթղթերը:

Սույն հրահանգի իմաստով «Արժեթղթերի փաթեթի կառավարումը»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված ծառայություններ են:

Հաշիվ 8300 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 8300-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են արժեթղթերի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված և որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող դասակարգված արժեթղթերը, նրանց վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ հետ վերադարձված, վաճառված միջոցները, վերաչափումից արժեքի նվազումը:

83000 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից արժեթղթերի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված այն արժեթղթերի առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք ի շահ հաճախորդի դասակարգված են որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված արժեթղթերն արտացոլելիս ձևակերպվում է.

ԴԿ - 83000

ԿԿ - 83200:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր ձեռք բերելիս.

ԴԿ - 83000

ԿԿ - 83100:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթերը վերագնահատելիս.

ԴԿ - 83000

ԿԿ - 83430:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթերը վերաչափելիս (դրական վերաչափման դեպքում)

ԴԿ - 83000

ԿԿ - 83430:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթերը վաճառելիս, եթե վաճառքի գինը բարձր է արժեթղթի հաշվեկշռային արժեքից.

ԴԿ - 83100

ԿԿ - 83000

ԿԿ - 83420,

եթե վաճառքի գինը ցածր է արժեթղթի հաշվեկշռային արժեքից, ապա ձևակերպվում է.

ԴԿ - 83100

ԴԿ - 83500

ԿԿ - 83000

1-ին կարգի հաշիվ 8300-ում և 8301-ում ընդգրկված մնացած հաշիվների հաշվառումը տարվում է նույն սկզբունքով, ինչ որ հաշիվներ 83000-ի դեպքում:

Հաշիվ 8302 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող վաճառքի համար մատչելի արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 8302-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են արժեթղթերի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված և որպես վաճառքի համար մատչելի դասակարգված արժեթղթերը, նրանց վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ հետ վերադարձված, վաճառված միջոցները, վերաչափումից արժեքի նվազումը:

83020 «Կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից արժեթղթերի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված այն արժեթղթերի առկայության ու շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք ի շահ հաճախորդի դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված արժեթղթերն արտացոլելիս ձևակերպվում է.

ԴԿ - 83020

ԿԿ - 83200:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթեր ձեռք բերելիս.

ԴԿ - 83020

ԿԿ - 83100:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթերը վերագնահատելիս.

ԴԿ - 83000

ԿԿ - 83450:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթերը վերաչափելիս (դրական վերաչափման դեպքում)

ԴԿ - 83020

ԿԿ - 83430:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կենտրոնական բանկերի կողմից թողարկված արժեթղթերը վաճառելիս, եթե վաճառքի գինը բարձր է արժեթղթի հաշվեկշռային արժեքից.

ԴԿ - 83100

ԿԿ - 83020

ԿԿ - 83420,

եթե վաճառքի գինը ցածր է արժեթղթի հաշվեկշռային արժեքից, ապա ձևակերպվում է.

ԴԿ - 83100

ԴԿ - 83500

ԿԿ - 83020

Հաշիվ 8304 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր»

1-ին կարգի հաշիվ 8302-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են արժեթղթերի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված և որպես մինչև մարման ժամկետը պահվող դասակարգված արժեթղթերը, իսկ կրեդիտում՝ հետ վերադարձված, վաճառված միջոցները: Ընդգրկված հաշիվների հաշվառումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Ենթաբաժին 831 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող այլ ակտիվներ»

Ենթաբաժին 831-ում ընդգրկված հաշիվները նախատեսված են բանկի կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի համաձայն իրենց հաճախորդներից կառավարման նպատակով վերցված, ինչպես նաև գործունեության ընթացքում ձեռք բերված և գործարքների առարկա հանդիսացող ակտիվները:

Հաշիվ 8310 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժույթ»

1-ին կարգի հաշիվ 8310-ում ընդգրկված 2-րդ կարգի հաշիվներն ակտիվային են՝ դեբետում արտացոլվում են արժեթղթերի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված և որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող դասակարգված արժեթղթերը, նրանց վերաչափումից արժեքի աճը, իսկ կրեդիտում՝ հետ վերադարձված, վաճառված միջոցները, վերաչափումից արժեքի նվազումը:

83100 «Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժույթ» - հաշիվը նախատեսված է կազմակերպության կողմից արժեթղթերի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադիրներից/հաճախորդներից ստացած գումարների հաշվառման համար:

Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն հիմնադրից ստացված կամ գործունեության արդյունքում ստացած գումարներն արտացոլելիս ձևակերպվում է.

ԴԿ - 83100

ԿԿ - 83200:

Բանկերը, միևնույն ժամանակ կատարվում է հետևյալ ձևակերպում

Դպ - 10000

Կպ - 38200:

Սույն բաժնի մնացած հոդվածների հաշվառումը իրականացվում է նույն սկզբունքով, ինչ որ նմանատիպ հաշվեկշռային հոդվածների հաշվառումը:

ԲԱԺԻՆ 84 «ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

Բաժին 84-ը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

840 «Բրոքերային ծառայության շրջանակներում կառավարվող արժեթղթեր»,

841 «Բրոքերային ծառայության շրջանակներում կառավարվող այլ ակտիվներ»,

842 «Բրոքերային ծառայության շրջանակներում կառավարվող ակտիվների գծով պարտավորություններ հիմնադիրների (հաճախորդների) նկատմամբ»,

843 «Բրոքերային ծառայության շրջանակներում առաջացած պարտավորություններ»,

844 «Եկամուտներ բրոքերային ծառայության շրջանակներում կառավարվող ֆինանսական ակտիվներից»,

845 «Վնասներ բրոքերային ծառայության շրջանակներում կառավարվող ֆինանսական ակտիվներից»,

846 «Հիմնադրի (հաճախորդի) ֆինանսական արդյունք բրոքերային ծառայության շրջանակներում»,

Սույն հրահանգի իմաստով բրոքերային գործունեությունը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ծառայություններ են: Այս բաժնի հաշիվների հաշվառման սկզբունքները նույն են, ինչ-որ բաժին 83-ում ընդգրկված, ինչպես նաև համապատասխան հաշվեկշռային հաշիվներին:

ԲԱԺԻՆ 85 «ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Բաժին 85-ը բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝

850 «Ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող արժեթղթեր»,

851 «Ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող այլ ակտիվներ»,

852 «Ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ակտիվների գծով պարտավորություններ մասնակիցների նկատմամբ»,

853 «Ներդրումային ֆոնդի կառավարման ներքո առաջացած պարտավորություններ»,

854 «Եկամուտներ ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ֆինանսական ակտիվներից»,

855 «Վնասներ ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող ֆինանսական ակտիվներից»,

856 «Մասնակիցների ֆինանսական արդյունք ներդրումային ֆոնդի կառավարման պայմանագրի շրջանակներում»,

Սույն հրահանգի իմաստով բրոքերային գործունեությունը «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ծառայություններ են: Այս բաժնի հաշիվների հաշվառման սկզբունքները նույն են, ինչ-որ բաժին 83-ում ընդգրկված, ինչպես նաև համապատասխան հաշվեկշռային հաշիվներին:

ԲԱԺԻՆ 86 «ԱՅԼ ՀԵՏՀԱՇՎԵԿՇՈՒՄՅԻՆ ՀՈՂՎԱԾՆԵՐ»

Ենթաբաժին 860 «Դուրսգրումներ»

Այս բաժնում հաշվառում են հաշվեկշռից դուրս գրված վարկերը, դեբիտորական պարտքերն ու այլ ակտիվները: Դուրս գրված գումարները կամ դրանց մի մասը այս բաժնից նվազեցվում են ակտիվների վերադարձման դեպքում: Չվերադարձված ակտիվներն այս բաժնից դուրս են գրվում գրանցման պահից հինգ տարի անց:

Ենթաբաժին 861 «Գործառնական վարձակալությամբ օգտագործվող միջոցներ»

Ենթաբաժին 861-ը նախատեսված է կազմակերպության կողմից գործառնական վարձակալությամբ ստացված ակտիվների հաշվառման համար: Սույն ենթաբաժնում ընդգրկվող միջոցները անհրաժեշտ է հաշվառել պայմանագրով սահմանված տվյալ տարվա վարձակալության գումարի չափով:

Ենթաբաժին 862 «Ֆինանսական վարձակալությամբ տրամադրված ակտիվներ»

Ենթաբաժին 862-ը նախատեսված է բանկի կողմից գործառնական վարձակալությամբ օգտագործվող և ֆինանսական վարձակալությամբ տրամադրված ակտիվների հաշվառման համար:

Ենթաբաժին 863 «Ֆակտորինգ»

Ենթաբաժին 863-ը նախատեսված է բանկի կողմից այլ անձանց ֆակտորինգային պայմանագրերի փաթեթների առավելագույն սահմանաչափերի, ինչպես նաև դրանց չօգտագործված մասերի հաշվառման համար:

Ենթաբաժին 864 «Արժեքների պահպանում»

Ենթաբաժին 864-ը նախատեսված է ի պահ ընդունված ի պահ տրված ակտիվների հաշվառման համար: Այն դեպքում, երբ բանկին հայտնի չէ ի պահ ընդունված արժեքների արժեքը, դրանք գրանցվում են 1 դրամ պայմանական արժեքով:

Ենթաբաժին 865 «Տեղաբաշխման ենթակա արժեթղթեր»

Ենթաբաժին 865-ը նախատեսված է հաճախորդի միջոցներով կնքված ածանցյալ գործիքներն ու նրա կողմից թողարկված և տեղաբաշխման ենթակա արժեթղթերի հաշվառման համար:

Ենթաբաժին 866 «Այլ հոդվածներ»

Ենթաբաժին 866-ը նախատեսված է հետհաշվեռում հաշվառման ենթակա այն հոդվածների հաշվառման համար, որոնց համար հատուկ հաշիվներ նախատեսված չեն: